Ազգ
Azg
30 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 220 (4600)
ISSN: 1829-1651

# Դիվանագիտությունը՝ քողազերծված

*ԱՄՆ դիվանագիտական ներքին խոհանոցի գաղտնազերծումը բացահայտում է մեր տարածաշրջանի «քամքամուկոս» իրականությունը*

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ժամանակին մի հետաքրքրական խոսք էր հնչում: Հարցին, թե որտեղ չի կարող զինվորական կամ այլ հեղափոխություն անել, պատասխան էր հնչում, թե միայն Միացյալ Նահանգներում, քանի որ այնտեղ չկա ամերիկյան դեսպանատուն:

Կատակը՝ կատակ, սակայն, պարզվում է, իրականությունն այդ կատակից, ինչպես եւ մյուս կատակների դեպքում, այնքան էլ հեռու չէ:

WikiLeaks կայքը, որ առավել հայտնի է գաղտնի փաստաթղթերի գաղտնազերծմամբ, այն էլ ամերիկյան աղբյուրներից, կիրակի երեկոյան հրապարակել է տարբեր աստիճանի գաղտնիության ավելի քան 250 հազար ամերիկյան դիվանագիտական փաստաթղթեր, որոնցում անդրադարձ կա նաեւ հարավկովկասյան տարածաշրջանի երկրներին, Թուրքիային, Ռուսաստանին եւ այլն:

Թուրքիայի եւ թուրքական դիվանագետների առնչությամբ, ըստ WikiLeaks-ի, անվստահություն կա ԱՄՆ դիվանագետների կողմից, հատկապես Էրդողանի հանդեպ: ԱՄՆ դիվանագետների գաղտնի նամակների համաձայն, Էրդողանին ընկալում են որպես անկանխատեսելի գործընկերոջ, ընդ որում, այնպիսին, որը վաս է պատկերացնում քաղաքականությունը՝ Թուրքիայից դուրս: Ինչ վերաբերում է Էրդողանի իշխանական դիրքերին, ապա ստացվում է մի իրավիճակ, երբ Էրդողանը վախենում է իր դիրքը կորցնելուց, թեեւ նրա դիրքերը բավականին ամուր են: «Թայիփը հավատում է Աստծուն, թեեւ չի վստահում նրան», իր զեկույցներից մեկում գրել է մի ամերիկացի դիվանագետ: Տես էջ 5



# Հայ-թուրքական հաշտեցում մինչեւ 2015-ը, այլապես անգամ Միացյալ Նահանգները կարող է ճանաչել Ցեղասպանությունը

*Աստանան՝ բեկումների ակնկալիքներով*

Հայաստանի եւ Թուրքիայի ստորագրած արձանագրությունները նպատակ ունեին նորմալացնելու երկկողմ հարաբերությունները, բայց դրանք դեռեւս վավերացված չեն, իսկ սահմանն էլ մնում է փակ: Այսպիսի նախաբանով է հայ-թուրքական թեմային անդրադարձել լոնդոնյան Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտն իր կայքէջում տեղադրված «Հայ-թուրքական հաշտեցման փշրված հույսերը» վերնագրով հրապարակման մեջ, որում ոչ միայն ներկա վիճակն է հետազոտությամբ ներկայացվում, այլեւ հնարավոր ելքեր են նշվում:

Ըստ հետազոտական կենտրոնի, չնայած ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ ԵՄ-ի ջանքերին՝ արձանագրությունների վավերացման հեռանկարները բավականին դժգույն են: Ընդ որում, որպես վավերացման հիմնական խոչընդոտներ են նշվում, նախ, Ադրբեջանին տված Թուրքիայի խոստումը՝ չբացելու սահմանը, քանի դեռ Հայաստանը չի հրաժարվել ԼՂՀ հարակից շրջանների վերահսկողությունից, ինչպես նաեւ 1915թ. հայերի կոտորածը «ցեղասպանություն» ճանաչելու ձգտումներից: Հետաքրքրական է, որ խոսելով ղարաբաղյան խնդրից՝ բրիտանացի փորձագետները Արցախը նշել են որպես «վիճելի անկլավ Ադրբեջանում, որն օկուպացվել է Հայաստանի կողմից՝ 1992-94թթ. հակամարտությունից ի վեր»:

Այդուհանդերձ, ներկայացնելով հայ-թուրքական խնդրի ներկայիս վիճակը, լոնդոնյան մասնագետները գտել են, որ փակուղու տարած հիմնական խնդիրը «Ադրբեջանի կարեւորության թերագնահատումն էր», այն դեպքում, երբ Ադրբեջանը հստակորեն փորձում էր խոչընդոտել այդ գործընթացին:

Միեւնույն ժամանակ, ըստ հետազոտության, Հայաստանը կարող էր հայ-թուրքական գործընթացից ամենամեծ օգուտն ունենալ՝ ելնելով փակ սահմանների հետեւանքով ծագած խնդիրների վերացման հանգամանքից: Չնայած դրան՝ որոշ ուժեր Հայաստանի ներսում, ըստ հրապարակման, համամիտ չէին հայ-թուրքական գործընթացը նախաձեռնող Սերժ Սարգսյանի հետ՝ համարելով Ցեղասպանության ճանաչման միջազգային ճանաչման խոչընդոտ: Եվ սա էլ, ըստ լոնդոնյան ինստիտուտի մասնագետների, «փոքր կասկածելով թողեց Սերժ Սարգսյանին՝ ԼՂ հարցում փոխզիջումների գնալու համար»: Տես էջ 8

# Սարկոզին չի մեկնի Աստանա



Եթե Մինսկի խմբի համանախագահող երկրներից փաստորեն արդեն երկրորդի նախագահն է հրաժարվել ԵԱՀԿ գագաթաժողովին մասնակցելուց, ապա ակնհայտ է դառնում, որ նախ՝ Աստանայում «բեկում» Ղարաբաղի հարցով չի լինի, ապա նաեւ՝ ՌԴ նախագահը կրկին «միայնակ մնաց» միջնորդներից: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Վաշինգտոնը Աստանա կգործուղի պետքարտուղար Քլինթոնի գլխավորած պատվիրակությանը, երեկ էլ հայտնի դարձավ, որ Ֆրանսիան կներկայացնի այդ երկրի նորանշանակ վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնը: Այս մասին, ըստ «Կազթագ» կայքի, հաղորդել է Ղազախստանի ԱԳՆ-ի մամուլի խոսնակ **Իլյաս Օմարովը**: Վերջինս նաեւ տեղեկացրել է, որ Աստանա ժամանողներից առաջիններից մեկը կլինի Իլհամ Ալիեւը. «Երկուշաբթի օրվա երկրորդ կեսին Ղազախստան կժամանի Հիլարի Քլինթոնի պատվիրակությունը: Այնուհետեւ մենք կհյուրընկալենք նաեւ Թուրքիայի, Հայաստանի, Բելառուսի, Ռուսաստանի, Մոլդովայի եւ մի շարք այլ երկրների ղեկավարներին: Պատվիրակությունների մի մասը Աստանա կժամանի դեկտեմբերի մեկին», նշել է Օմարովը: **Հ. Ա.**

# Հայաստանի նախագահը գնում է Աստանա

Քաղաքագիտական շրջանակների նորմալ մասնագետները նախընտրում են գրեթե երբեք կանխատեսումներ չանել, որպեսզի ստիպված չլինեն բացատրել, թե ինչու դրանք իրականություն չդարձան: Այդպիսի մի իրավիճակ ստեղծվել էր Հայաստանի նախագահի՝ Աստանա ԵԱՀԿ գագաթաժողովին մասնակցելու մեկնելու կամ չմեկնելու որոշման առնչությամբ:

Անկախ բոլոր չճշտված տեղեկություններից՝ Հայաստանի նախագահը, ըստ պաշտոնական հաղորդագրության, այսօր մեկնում է Աստանա՝ մասնակցելու դեկտեմբերի 1-2-ին Ղազախստանում կայանալիք ԵԱՀԿ 7-րդ գագաթաժողովին: Հաղորդագրությունն ավածին միայն հավելում է, որ Սերժ Սարգսյանը երկկողմ հանդիպումներ կունենա, սակայն ո՞ւմ հետ եւ ի՞նչ ձեւաչափով՝ չի մանրամասնվում: Բնականաբար, որեւէ տեղեկություն չկա, թե տեղի կունենա՞ հանդիպում Ադրբեջանի նախագահի հետ:

Ինչեւէ, մինչ գագաթաժողովը՝ կիրակի, ԵԱՀԿ գլխավոր քարտուղար **Մարկ Պերրեն դը Բրիշամբոն** հայտարարել է հենց Աստանայում, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար «կառուցողական մոտեցում է հարկավոր եւ կամք երկու կողմերից էլ, որպեսզի տարածաշրջանում հասնեն խաղաղության»: «Եկել է էջը շրջելու ժամանակը, որպեսզի երկու հարեւան երկրները կարողանան ապրել բարեկամության եւ համագործակցության մթնոլորտում», ասել է Բրիշամբոն:

Աստանայի գագաթաժողովի շրջանակներում ղարաբաղյան հարցի քննարկմանը այդ գագաթաժողովը, ըստ ԵԱՀԿ հակամարտությունների կանխարգելման կենտրոնի տնօրեն **Հերբերտ Զալբերի**, կարող է դրական խթան հաղորդել: Զալբերը նշել է նաեւ, որ իրատեսական չէ կարգավորում ակնկալել գագաթաժողովի շրջանակներում, բայց դրական մթնոլորտի հիմնում կարելի է ցանկանալ:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Բորդյուժան Հայաստանում է



Երկօրյա այցով երեկ Երեւան ժամանեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան: Հիշեցնենք՝ դեկտեմբերի 10-ին Մոսկվայում տեղի կունենա ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարների գագաթաժողով, որի նախապատրաստական աշխատանքները քննարկելու շրջանակում էլ դիտարկվում է կազմակերպության գլխավոր քարտուղարի այցը մեր երկիր: Բորդյուժան հանդիպել է ՀՀ նախագահի, արտգործնախարարի, պաշտպանության նախարարի եւ ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի հետ: **Հ. Ա.**

# Մի՞թե պարտավոր ենք տեղական արտադրողներին

*Իսկ նրանք պարտավոր չեն մեր շահերը հաշվի առնել*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Անկասկած է, որ տնտեսության կենսունակության եւ զարգացման գրավականը տեղական արտադրությունն է: Տեղական արտադրության զարգացմանը պետք է աջակցենք բոլորս՝ սկսած շարքային սպառողներից մինչեւ կառավարություն: Իհարկե, ցանկալի կլիներ, որ կառավարության աջակցությունն ավելին լիներ: Հատկապես մի շարք ոլորտների (սարքաշինություն, հաստոցաշինություն, ոսկերչություն, քիմիական արդյունաբերություն, մետալուրգիա) զարգացման առումով կառավարությունը, կարելի է ասել, էական քայլեր չի ձեռնարկում: Մինչդեռ սրանք մեծ ավելացված արժեք, մեծաթիվ աշխատատեղեր ապահովող, երկիրը արդյունաբերական դարձնող ճյուղերն են, որոնք ժամանակին մեր երկրի տնտեսության հիմնասյուն են եղել:

Ներկայումս տեղական արտադրության ամենազարգացած ճյուղը սննդարդյունաբերությունն է, որի զարգացման համար վերջին 10 տարվա ընթացքում պետությունը որոշակի միջոցառումներ է իրականացրել: Իհարկե, ցանկալի կլիներ նաեւ, որ մեր համերկրացիներից շատերը հրաժարվեին արտասահմանյան արտադրության ապրանքների նկատմամբ տածած սիրուց եւ նախընտրեին տեղական արտադրության սննդամթերքը: Սակայն, որքան էլ տարօրինակ կարող է թվալ, հենց իրենք՝ սննդամթերքի տեղական արտադրողները դրան չեն նպաստում: Ավելին, նրանք իրենց գնային քաղաքականությամբ կարծես հարկադրում են, որ նաեւ իրենց արտադրանքի սպառողները հրաժարվեն այն գնելուց: Ասվածն ապացուցող փաստեր՝ որքան ուզես:

Տեղական արտադրության՝ «Արարատ», Լուսակերտի եւ այլ թռչնաֆաբրիկաների թռչնի մսի 1 կգ-ն արժե 1400-1500 դրամ, ներմուծվող բրազիլական թռչնի մսի 1 կգ-ն՝ մոտ 1000 դրամ: «Մարիանա» ընկերության արտադրած տուփով կարագը մոտ 500-520 դրամ է, «Աշտարակ կաթինը»՝ 530 դրամ, իսկ ներմուծվող «Ամքոր» կարագինը՝ դարձյալ 500 դրամ: Հայկական պանրի թանկացման մասին շատ ենք գրել: Այժմ երբ «Լոռի» պանրի 1 կգ-ի գինը դարձել է 2200-2800 դրամ, սկսել է գերազանցել ներմուծվող նորզելանդական պանրի գինին: Հայկական «Լյուքս» շոկոլադի սալիկն արժե 330-350 դրամ՝ այնքան, որքան ներմուծվող «Ալպեն գոլդ» շոկոլադի սալիկներինը: Հայկական երշիկեղենի որոշ տեսակների գները նույնպես սկսել են մոտենալ ռուսական ներմուծվող երշիկեղենի գներին, եւ հեռու չէ այն պահը, երբ այստեղ եւս կունենանք տեղական երշիկեղենի ավելի բարձր գին ներմուծվողի համեմատ:

Այժմ ինչպե՞ս կարող են բացատրել տեղական թռչնի միս արտադրողները, թե ինչպե՞ս հեռավոր Բրազիլիայից, օվկիանոսը կտրելով, Հայաստան եկող բրազիլական հավերն ավելի էժան են, քան տեղական հավերը: Ի՞նչ է, մեր հավերը «էլիտար» հավե՞ր են:

Տես էջ 2

# Զեկույցը թերի է, հասարակության անհանդուրժողականությունը՝ արդարացված

ԱՄՆ-ի պետդեպարտամենտը վերջերս հրապարակել է 2010 թ. «Կրոնական ազատությունների մասին» զեկույցը, որտեղ Հայաստանը ներկայացվում է որպես կրոնական փոքրամասնությունների ազատությունը սահմանափակող պետություն: Ըստ զեկույցի, բնակչությունը հիմնականում բացասաբար է վերաբերվում կրոնական փոքրամասնությունների բոլոր խմբերին, նրանք ընկալվում են պետության համար սպառնալիք: Ներկայացված է նաեւ զինվորական ծառայությունից կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար ազատազրկված Եհովայի վկաների թիվը:

Ցավալին այն է, որ հսկայածավալ զեկույցը դարձել է խլրդային գործունեություն ծավալող եւ նորմալ մարդկանց տականքի վերածող մի շարք աղանդավորական կազմակերպությունների խոսափող: Օրինակ, Եհովայի վկաների ղեկավարը բողոքել է, որ իրենց ձեռքով մշակած «մարդիկ» գտնվում են մեկուսարաններում, նրանց Հայ առաքելական եկեղեցին վերաբերում է թշնամաբար, իսկ ազգայնական կազմակերպությունները եհովայականների դեմ թռուցիկներ են տարածում:

Որ վերոշյալ զեկույցը թերի է, փաստ է. հիմնված է միայն մեկ կողմի կարծիքի վրա: Հայ առաքելական եկեղեցու եւ հասարակության մեծագույն հատվածի տեսակետը զեկույցում չկա:

Եթե Հայաստանը՝ որպես պետություն, հաշվի առնելով մի շարք միջազգային պարտավորություններ, ընդունում է աղանդների գոյությունը, դա չի նշանակում, որ հասարակությունն էլ պետք է լուռ համակերպվի ու ոչինչ չձեռնարկի, երբ աղանդավորները մշակում են իրենց հարեւաններին, բարեկամներին, զոմբիացնում, դարձնում ամեն ինչի հանդեպ անտարբեր, այնքան, որ հանուն Եհովայի կամ մեկ այլ «աստծո» պատրաստ են անգամ ծնողներին սպանել, արգելել, որ երեխային վիրահատեն՝ դառնալով նրա մահվան պատճառ, կամ ինքնասպանություն գործել: Օրինակները քիչ չեն:

2009-ի մարտի 18-ին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում հայտնաբերվեց դատապարտյալ Արմեն Խաչատրյանի դիակը՝ կախված վիճակում: Քրեակատարողական հիմնարկում նա հայտնվել էր 2007-ի հուլիսի 17-ից, երբ պարտադիր զինծառայությունից հրաժարվելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի առաջին մասով դատապարտվեց ազատազրկման 30 ամիս ժամկետով: Խաչատրյանը կալանավայրում անցկացրել է 20 ամիս: Պաշտոնական եզրակացության մեջ հաստատվեց, որ ինքնասպանությունը կատարվել էր կրոնական հողի վրա: 20-ամյա Արմենի ծնողները Եհովայի վկաներ աղանդի հետեւորդներ են: Որդին էլ՝ հետեւելով ծնողների համոզմունքին, ինքնասպանություն էր գործել:

2007 թ. մայիսի 24-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր աթոռի սուրբ խորանի վրա բարձրացած Եհովայի վկան նախ հայհոյեց եկեղեցուն եւ նրա հետեւորդներին, այնուհետեւ սկսեց նետել սուրբ սեղանի վրայի իրերը: Երբ Մայր տաճարի հոգեւորականները փորձեցին կասեցնել խուլիգանությունը, կարգազանցը բղավեց, թե ծառայում է իր աստծուն՝ Եհովայի վկային, եւ բոլորը պատժվելու են:

2005-ին Աջափնյակ եւ Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում Անահիտ Հարությունյանին զրկեցին մայրական իրավունքներից: Մայրը Եհովայի վկա էր ու բռնություն էր կիրառել 8-ամյա Արամիկի նկատմամբ: Մոր ծեծերն ու վիրավորանքները ամենօրյա բնույթ էին կրում: Մոր հետ անցկացրած օրերն այնքան սարսափելի էին, որ փոքրիկ Արամիկը դատարանում հրաժարվեց նրանից՝ նախընտրելով ապրել Բելառուսում ապրող հոր հետ:

2002-ին «Եհովայի վկաների» հայաստանյան կազմակերպության հեղինակավոր դեմքերից Լյովա Մարգարյանի դեմ մեղադրանք էր ներկայացվել ՔՕ 244-րդ հոդվածի առաջին մասով, այն է՝ «Կրոնական ծիսակատարությունների պատրվակով քաղաքացիների անձի եւ իրավունքների դեմ ոտնձգություններ»:

2004-ին սատանայապաշտները գազանաբար սպանեցին ոսկերչին: Փորձաքննությամբ պարզվեց, որ դա զուտ սպանություն չէր, այլ զոհաբերություն:

2004-ին 12-ամյա Անուշիկի դին գտան Հրազդանի ձորում՝ ձեռքերը կապված վիճակում ծառից կախված: Նախաքննությամբ պարզվեց, որ Անուշիկը հոգեգալստական աղանդի հետեւորդ է. նրա սենյակում, բացի այդ աղանդի մասին գրականությունից, որեւէ այլ բան ոստիկանները չէին հայտնաբերել:

Հետեւաբար հասարակական անհանդուրժողականությունը պետք է միշտ լինի ու արդարացված է: Պետք է պայքարել աղանդավորների դեմ քանի դեռ նոր զոհեր չեն արձանագրվել, քանի դեռ նոր ծնողասպաններ ի հայտ չեն եկել: Հայաստանը փոքր պետություն է, որի 350.000 բնակչությունն արդեն լրացրել է այդ գլխաքանակը. պայքարը նրանց դեմ պետք է սկսել այսօրվանից, վաղը ուշ կլինի:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԳ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Վերին պալատում հինգշաբթի օրը կայացավ Եհովայի վկաներ կազմակերպության անդամ, ՀՀ քաղաքացի Բայադյանի դիմումի լսումը: Եհովայի վկան խուսափել էր պարտադիր զինվորական ծառայությունից, ինչի համար էլ քրեական պատասխանատվության էր ենթարկվել: Բայադյանը դիմել էր դատարան՝ պնդելով, որ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու համար իրեն պատասխանատվության ենթարկելը խախտում է իր դավանանքի ազատության իրականացման եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքը: Հարցի քննարկումից հետո Եվրոպական դատարանի պալատը վճիռ էր ընդունել, որով հաստատվել է, որ դատապարտելով Բայադյանին՝ Հայաստանի իշխանությունները չեն խախտել եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը:**

# Մի՞թե պարտավոր ենք տեղական արտադրողներին

*1-ին էջից*

Եթե Բրազիլիայում ավելի մեծ քանակով թռչնի միս են արտադրում, որն իջեցնում է ինքնարժեքը, ապա այնտեղ ֆաբրիկաների աշխատողներին անհամեմատ ավելի բարձր են վարձատրում, քան մեզ մոտ, որն էլ արդեն բարձրացնում է ինքնարժեքը: Դրան էլ ավելացնենք նաեւ ներմուծման հսկայական ճանապարհն ու ծախսերը, որ չունեն տեղական արտադրողները: Նույնը կարելի է ասել Նոր Զելանդիայից ներմուծվող պանրի, Ֆինլանդիայից ներմուծվող կարագի, Ռուսաստանից ներմուծվող շոկոլադի եւ այլ ապրանքների մասին:

Շարքային քաղաքացին մտածում է, փորձում է գտնել այս երեւույթի օբյեկտիվ պատճառներ եւ չի կարողանում: Եվ դժվար թե գտնի, քանի որ ոչ մի օբյեկտիվ պատճառ գոյություն չունի: Պարզապես տեղական արտադրողները ցանկանում են, որ բոլորը մտածեն իրենց մասին, իսկ իրենք՝ իրենց գերշահույթից բացի, ուրիշ ոչ մի բանի մասին չմտածեն: Կամ գուցե նրանց թվում է, որ սպառողները պարտավո՞ր են իրենց արտադրանքը գնել միայն նրա համար, որ դա տեղական է, իսկ իրենք պարտավոր չեն սպառողների շահերը հաշվի առնել: Այդ ինչպե՞ս է պատահում, երբ սպառողները դժգոհում են տեղական արտադրանքի գներից, նրանց անմիջապես հակադարձում են, որ գները շուկայական են, եւ ոչ ոք իրավունք չունի թելադրել արտադրողներին, իսկ երբ սպառողները, նույն շուկայական տրամաբանությամբ, սկսում են ներմուծվող արտադրանքը գնել, նույն տեղական արտադրողները շուկայական տրամաբանությունն անմիջապես «մոռանում են» եւ սկսում իրենց արտադրանքը գնելու «հայրենասիրական» կոչեր անել: Եթե տրամաբանությունը պետք է լինի շուկայական, ապա պետք է լինի եւ՛ արտադրողի, եւ՛ սպառողի համար: Եթե սպառողները դրսեւորում են բարձր գիտակցություն եւ նախընտրում են տեղական արտադրանքը, ապա տեղական արտադրողներն էլ պետք է նման գիտակցություն դրսեւորեն, եւ նրանց արտադրանքը գոնե որակով ցածր եւ գնով բարձր չլինի ներմուծվողից, եթե չասենք՝ ավելի էժան եւ որակյալ լինի:

Ինչպես նշեցինք հրապարակման սկզբում, մեր երկրի հզորացման համար բոլորս պետք է աջակցենք տեղական արտադրությանը, բայց տեղական արտադրողներն էլ պետք է հաշվի առնեն մեր շահերը: Այս դեպքում օգուտը փոխադարձ կլինի, իսկ եթե շարունակվի այնպես, ինչպես հիմա է, ապա կտուժենք բոլորս՝ արտադրողներն էլ, սպառողներն էլ: Ժամանակն է, որ տեղական արտադրողները հասկանան այս պարզ ճշմարտությունը եւ գիտակցեն, որ ի վերջո նրանք ոչ ոքի լավություն չեն անում, որ բիզնես շահը պետք է փոխրել նաեւ սպառողների շահերին ընդառաջ գնալու մեջ:

ՏՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

# «Եթե ուշադիր լիներ, երեխաս չէր մահանա»

## *Բժշկին մեղադրում են անփութության մեջ է, իսկ բժիշկը սպասում է փորձաքննությանը*

**Նոյեմբերի 19-ին Ագբարյանների ընտանիքում լույս աշխարհ եկավ առաջնեկը: Փոքրիկն ընդամենը 5 օրվա կյանք ունեցավ եւ թթվածնային քաղցի հետեւանքով նոյեմբերի 22-ին մահացավ: Մայրը՝ Ծովինար Ղամբարյանը, փաստում է, որ «Արմենիա» բժշկական կենտրոնի բժիշկները կարող էին երեխայի կյանքը փրկել. երեխայի մահվան պատճառը բժշկի անուշադրությունն էր:**

**«Եթե բժիշկն ուշադիր լիներ, եւ կեսարյան հատում աներին, երեխաս չէր մահանա», պատմում է Ծովինար Ղամբարյանը:**

**Բժիշկների կանխատեսմամբ՝ փոքրիկը պետք է ծնվեր նոյեմբերի 15-ին, սակայն մայրը ցավեր զգացել է միայն նոյեմբերի 19-ին:**

**«Դավիթ Լեւոնովիչին ասացի, որ արդեն 4 օր ուշանում է, սակայն բժիշկն ասաց, որ դրանք կեղծ ցավեր են: Սպասենք մինչեւ երկուշաբթի, եթե բնական ցավեր չզգաս, ապա կեսարյան վիրահատմամբ կծննդաբերես»:**

**Ծովինարը պատմում է, որ նոյեմբերի 17-ին ուլտրաձայնային ստուգումից հետո (էխո) Դավիթ Աբովյանը հայտնել է, որ պտուղը մեծ է՝ 4 կգ 100 գրամ, եւ ասել է, որ եթե մոտակա երկու օրվա ընթացքում բնական ցավեր չառաջանան՝ կդիմեն կեսարյան վիրահատության:**

**Երկուշաբթի առավոտյան ժամը 9-ից 12-ը Ծովինարը նախածննդարանում է անցկացրել: «Սարսափելի ցավեր ունեի: Ես եւ ամուսինս խնդրում էինք, որ կեսարյան վիրահատում անեն, սակայն բժիշկն ասում էր՝ ցուցում է հարկավոր: «Մի՞թե պտղի մեծությունը ձեզ համար չի կարող ցուցում լինել», հարցրեցի բժիշկն: Նա էլ ասաց՝ «պրինցիպի կարող է» եւ հեռացավ»:**

**Որոշ ժամանակ անց Ծովինարին բժշկի հրահանգով ցանկացել են ստիմուլյացիա անել: «Հրաժարվեցի: Նախորդ օրը Դավիթ Լեւոնովիչն ասել էր, որ կատեգորիկ արգելվում է ստիմուլյացիա անելը»: Բայց կես ժամ հետո բուժքույրը կրկին վերադարձավ ու գրեթե գոռալով ասաց, թե ուշացել ենք, անհապաղ պետք է ստիմուլյացիա անենք: «Երբ հարցրեցի, թե ինչ են ներարկում, ասաց՝ օքսիտոցին՝ կծկումների շատացման համար եւ մաքուր ջուր: Այդ սարքը երեք ժամ միացրած մնաց, բայց բժիշկն ասաց, որ բացվածքը կիսատ է, ու հնարավոր չէ բնական ճանապարհով ծննդաբերել, պետք է մի քիչ էլ սպասել»:**

**Ծովինարին միայն երկու ժամ անց տարան ծննդարան, որտեղ բժիշկը նկատել է, որ պտղի դիրքը բարձր է: «Դավիթ Լեւոնովիչը անհանգստացած էր, խուճապի էր մատնվել: Ես էլ շատ վախեցա: Բժիշկն ասաց, որ պտուղը մեծ է, ու չեմ կարող նորմալ ծննդաբերել: Երբ պտղաջրերը գնացել էին, ասաց, որ կոնքերը նեղ են, երեխան բնական ճանապարհով չի կարող ծնվել: Մի՞թե նա չէր կարող այդ ամենի մասին ավելի շուտ հասկանալ: Ախր նա գիտեր, որ պտուղը մեծ է», պատմում է Ծովինարը: Նրա ներկայացմամբ, բժիշկը անելանելի դրության մեջ էր հայտնվել. կեսարյան հատում չէր կարող անել, իսկ բնական ճանապարհով երեխան կարող էր վնասվածք ստանալ:**

**«Այդպես 45 րոպե էլ տանջվեցի ու միայն երեկոյան 7 անց 45 փոքրիկը ծնվեց: Երեխաս առաջին ճիչը չարձակեց, ծնվել էր թթվածնային քաղցով, թոքերը չէին բացվել, ուղեղին թթվածին չէր հասել: Երեխաս 5 օր տանջվեց: Բժիշկները փորձում էին նրան փրկել, բայց անօգուտ: Անհնար էր ճշմարտությունը վերականգնել», հիշում է մայրը:**

Կատարվածի համար ծնողները մեղադրում են բժշկին: Ծովինար Ղամբարյանը նշում է, որ ծննդաբերությունից հետո զրուցել է բժշկի հետ. վերջինս նրան փորձել է համոզել, որ ստիմուլյացիայի չեն դիմել:

«Սակայն երբ նրան ասացի, որ ինքս եմ տեսել ու խոսել բուժքրոջ հետ, ով խոստովանել է, որ իր հրահանգով ստիմուլյացիայի են դիմել, ասաց, որ օքսիտոցին չեն միացրել, միայն մաքուր ջուր: Ի՞նչ կապ ունի մաքուր ջուրը, դա ի՞նչ պետք է աներ: Միայն մաքուր ջուր չեն միացնում, օքսիտոցին էլ են միացնում, որ կծկումները շատանան: Մինչդեռ մի քանի օր առաջ նա ասում էր, որ արհեստական ցավերի չեն դիմելու», ասաց նա: Ծովինարը պատմում է, որ բժիշկը իր հետ զրույցում խոստովանել է, որ միայն ծննդաբերության ժամանակ է գիտակցել, որ պետք է կեսարյան հատում անել:

Մինչդեռ բժիշկ **Դավիթ Աբովյանը** «**Ազգի**» հետ զրույցում ծննդաբերության ընթացքը բնորոշեց հարթ: «Երեխան տրավմա չի ստացել, ներարգանդային թոքաբորբ է ստացել: Եթե անգամ կեսարյան հատում անեինք, երաշխավորված չէր, որ փոքրիկը կապրեր»:

Նրա մեկնաբանությամբ՝ Ծովինարի կոնքերը նեղ չէին, ու այդ առումով որեւէ խնդիր չի ծագել: «Մինչեւ հիմա էլ համոզված եմ, որ կեսարյան հատման կարիք չկար: Այդպիսի բան չկա, որ ես հայտարարել եմ, թե պետք էր կեսարյան հատում անել: Նման խոսակցություն չի եղել: Ինչ վերաբերում է փոքրիկի մահվանը, ապա միայն փորձաքննությունից հետո պարզ կդառնա, թե որն է մահվան պատճառը», ասաց նա:

Երեկ ծնողները հայտարարություն են տվել ոստիկանությանը, քրեական գործ է հարուցվել Դավիթ Հակոբյանի նկատմամբ: Հայտարարության մեջ ծնողները մեղադրում են բժշկին իր մասնագիտական պարտքը կատարելիս ցուցաբերած սխալների համար, ինչի հետեւանքը դարձել է երեխայի մահը:

«Մեր նպատակն է, որ նման դեպքեր այլեւս չկրկնվեն, որ ուրիշ ծնողները չապրեն այն, ինչ մենք ապրեցինք, որ բժշկի սխալի պատճառով ուրիշ փոքրիկներ չմահանան», եզրափակեց Ծովինարը:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Երիտասարդ արմենականները Բերձորին աջակցելու յուրահատուկ ձեւ էին ընտրել





Նոյեմբերի 27-28-ին երիտասարդ արմենականները Լեռնային Ղարաբաղում էին՝ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում: Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) երիտասարդական ակումբի անդամների Բերձոր այցելության նպատակն էր աջակցել Արցախի զորացմանը: Արմենականները աջակցության յուրահատուկ ձեւ էին ընտրել՝ հիմնական շեշտը դնելով հոգեւոր խորհրդի վրա: Արմենական-ՌԱԿ-ը, համաձայնության գալով Բերձորի քաղաքապետարանի հետ, Բերձորում ծառատունկ էր կազմակերպել:

Արմենական-ՌԱԿ հանրապետական վարչության եւ ՌԱԿ համաշխարհային խորհրդի անդամ **Գայանե Մուրադյանն** ասում է, որ անհրաժեշտ է միասնականորեն աջակցել Արցախի հզորացմանը: Ծառատունկն աջակցության եւս մի միջոց է, որը հաջորդեց նոյեմբերի 25-ին կայացած «Ջուրը կյանք է» խորագրով «Հեռուստամարաթոն 2010»-ին: Այս ծառատունկով կուսակցությունն իր գործուն մասնակցությունն է ունենում «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ Արցախի զարգացմանը նպաստելու ծրագրին: Գայանե Մուրադյանը, որը եւս Բերձորում էր, ասաց. «Մինչ ծառատունկն արմենականները մասնակցել են նաեւ դրամահավաքին՝ հեռախոսով փոխանցելով իրենց նվիրատվությունները»: Ծառատունկը կարծես շարունակում է դրամահավաքի խորագիրը: Վերաբնակվողների համար նպաստավոր պայմաններ են անհրաժեշտ եւ միջոցներ, որպեսզի բնակիչները կապվեն իրենց հողին: Ամեն անգամ ջրելով, խնամելով հողն ու բնությունը՝ մարդիկ կապվում են այդ բնությանը:

Ամսի 27-ին Արմենական-ՌԱԿ երիտասարդական ակումբի 17 անդամներ, որոնք սովորում են Երեւանի տարբեր բուհերում, Բերձորում 125 թխկիներ տնկեցին, դրանց մի մասը տնկեցին Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցի բակում, որտեղ շաբաթ օրն իսկական եռուզեռ էր: Երիտասարդ արմենականներին միացել էին դպրոցի աշակերտները: **Մարիամ Սարգսյանը**, որը սովորում է 10-րդ դասարանում, ասաց. «Այս միջոցառումն ինձ առաջին անգամ ծառ տնկելու հնարավորություն տվեց», իսկ աշակերտներից Դիանա Սահակյանը հետեւյալ անհանգստություն հայտնեց. «Ես 3 տարի հետո ավարտելու եմ դպրոցս, մտածում եմ՝ ինձնից հետո ո՞վ է ջրելու իմ տնկած ծառը»: Աշակերտների փոխանցմամբ՝ ծառատունկի շնորհիվ կգեղեցկանա՛ւ իրենց քաղաքը, ե՛ւ դպրոցի բակը: Նույն օրը Ղարաբաղում շաբաթօրյակ էր կազմակերպվել, եւ արմենականների ծառատունկը հաճելի պատահականությամբ համընկել էր ընդհանուր շաբաթօրյակին:

Ծառատունկին իր մասնակցությունն ունեցավ նաեւ Արմենական-ՌԱԿ վարչության անդամ, «Վանաձոր» ակումբի ատենապետ Սեյրան Դաշիկյանը, որը Վանաձորից հասել էր Բերձոր, որպեսզի մասնակցի ծառատունկին: Գայանե Մուրադյանի խոսքով՝ անհրաժեշտ է համահայկական զորակցությամբ նպաստել Արցախի զարգացմանը. «Հենց սա պետք է լինի Բաքվի ռազմատենչ նկրտումներին ուղղված մեր պատասխանը»:

## Արմենականները Բերձորի Վահան Թեքեյանի անվան դպրոցում

Շաբաթ օրն արմենականները նաեւ շրջեցին Բերձորի թիվ 1 դպրոցում, որը շուրջ 2 տարի կրում է արեւմտահայ բանաստեղծ, ՌԱԿ առաջին ատենապետ Վահան Թեքեյանի անունը: Երիտասարդական ակումբի անդամները դպրոցի գրադարանին գրքեր նվիրեցին: Երիտասարդները գրքերը գնել էին իրենց միջոցներով: Գրադարանավարուհի **Գայանե Բալայանը** նշեց, որ իրենց գրադարանը, համեմատությամբ շրջանի դպրոցական մյուս գրադարանների, ավելի լավ վիճակում է: «Մեր գրադարանը շուրջ 2000 գիրք ունի՝ անգլերեն, ռուսերեն եւ հայերեն լեզուներով: Կուզենայի, որ մանկական գրականություն ավելի շատ ունենայինք եւ մշակույթի մասին գրքեր, որոնք հրատարակվել են վերջին տարիներին»:

Վերջում երիտասարդ արմենականները Հրանտ Դինքի անունը կրող դասասենյակի հուշամատյանում իրենց անունից գրառում թողեցին:

Ներկայումս Վ. Թեքեյանի անվան դպրոցը 177 աշակերտ ունի եւ 40-41 աշխատակիցներ: Տնօրենը՝ **Անահիտ Քոսակյանը**, ասաց, որ աշակերտների թիվը տարիների ընթացքում նվազել է. «2000-2001 ուսումնական տարում 365 աշակերտ ենք ունեցել»: Խոսելով ծառատունկի մասին՝ տնօրենը նշեց. «Մեր երեխաները, կարելի է ասել, կարոտ են նման միջոցառումների, որոնց միջոցով նրանք կարողանում են շփվել Հայաստանից եկած ուսանողների հետ»: Այնուհետեւ տնօրենն անդրադարձավ դպրոցի խնդիրներին, որոնց հանդիպում ենք նույնիսկ մինչեւ դպրոց հասնելը: Հիմնական ճանապարհից դեպի դպրոց տանող ճանապարհը, մեղմ ասած, անմխիթար վիճակում է: Ուսուցիչները ու աշակերտներն ամեն օր դպրոց են բարձրանում քարուքանդ աստիճաններով: Կրթօջախը հիմնական ճանապարհից բավականին բարձր է, եւ 15-20 րոպե տեւեց, մինչեւ աստիճաններով դեպի դպրոց բարձրացանք: Անբարեկարգ այս վիճակի պատճառով ուսուցիչներն ու երեխաները հաճախ սայթաքում, ընկնում են: Դպրոցի տնօրենն ասում է. «Ուսուցիչներն ավելի շատ են սայթաքում, հասկապես ձմռանը»: Անբարեկարգ վիճակում է նաեւ դպրոցի տանիքը: Անահիտ Քոսակյանը տեղեկացրեց, որ մյուս խնդիրը կապված է ջրամատակարարմանը. «Դպրոց ընդհանրապես ջուր չի մտնում, ստիպված դրսի ծորակից ենք օգտվում»: Դպրոցը հիմնովին վերանորոգման կարիք ունի, քայլելիս մանրահասակը շարժվում է: Եթե հանկարծ ուշադիր չլինես ու քայլելիս գլուխդ վեր բարձրացնես, ապա մանրահասակը տեղից դուրս կթռչի, իսկ քայլողն էլ ամենայն հավանականությամբ կսայթաքի: Թե ինչպե՞ս կլուծվի դպրոցի եւ ճանապարհի վերանորոգման հարցը, Անահիտ Քոսակյանը պատասխանեց. «Մեր հույսերը հիմնականում կապված են կառավարության ու իշխանության հետ: Ակնկալում ենք նաեւ արտասահմանցի բարերարների աջակցությունը»:

Արմենականների հետ դպրոցում շրջեց նաեւ Քաշաթաղի շրջանի վարչակազմի կրթության բաժնի վարիչ **Վարդան Բաղդասարյանը**: Նրա փոխանցմամբ՝ Քաշաթաղի շրջանում կան 47 հանրակրթական դպրոցներ, որտեղ սովորում են շուրջ 1500 աշակերտներ: 47 դպրոցներից 2-ը տեղակայված են Բերձորում: Խոսելով դպրոցների ջեռուցման խնդրի մասին՝ Վարդան Բաղդասարյանը տեղեկացրեց, որ շրջանի դպրոցների մեծ մասը ջեռուցվում է վառելափայտով, 6 դպրոց ջեռուցվում է էլեկտրական հոսանքով, եւ միայն մի դպրոց՝ գազով: Կոնկրետ Թեքեյանի անվան կրթօջախը ջեռուցվում է էլեկտրական հոսանքով:

## Հանդիպում Բերձորի քաղաքապետի հետ

Այսօրվա դրությամբ Բերձորը 1800 բնակիչ ունի: Բերձորի քաղաքապետ **Արթուր Սահակյանը** ցավով նշեց, որ 5-6 տարի առաջ քաղաքը 3500-4000 բնակիչ է ունեցել: Ա. Սահակյանի փոխանցմամբ՝ մարդկանց հեռանալու պատճառներից մեկը գործազրկությունն է. «Աշխատանք չգտնելու պատճառով բնակիչները գնացել են արտագնա աշխատանքի ու տարել իրենց ընտանիքները»: Ինչպես գործազրկությունը, բնակարանների պակասը Բերձորի համար եւս լուրջ խնդիր է: Պետք է նոր բնակարաններ ու տներ կառուցվեն, քանի որ առկա բնակարանները բավարար չեն, իսկ Քաշաթաղի շրջանը վերաբնակեցվող շրջան է համարվում: Ինչպես Լեռնային Ղարաբաղի մյուս շրջանների ու քաղաքների, այնպես էլ Բերձորի համար ջրամատակարարման խնդիրը շարունակում է մնալ ամենահրատապը: Քաղաքապետը տեղեկացրեց, որ եկող տարվանից ջրի խողովակները պետք է փոխվեն ու նորոգվեն, ինչի շնորհիվ կնվազեն հոսակորուստները. «Հիմա կորուստները շատ-շատ են: Մղված ջրի 70 տոկոսը կորցնում ենք»:

«**Ազգի**» հետ զրույցում քաղաքապետն անդրադարձավ նաեւ արմենականների ծառատունկին. «Այսպիսի միջոցառումների համար մենք միշտ ուրախ ենք: Լավ կլինի՝ բացի դեկորատիվ ծառերից տնկվեն նաեւ մրգատու ծառեր, որպեսզի բնակչությունը հետագայում օգտվի դրանց բերքից»:

Ծառատունկից տպավորված էին նաեւ Արմենական-ՌԱԿ երիտասարդական ակումբի անդամները: Նրանցից Արթուր Սարգսյանը Երեւան վերադառնալու ճանապարհին ասաց. «Մեր նյութական աջակցությունն Արցախին ավելի շատ սիմվոլիկ բնույթ էր կրում, ըստ իս՝ ծառատունկն ավելի շատ հոգեբանական աջակցություն էր»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Բերձոր-Երեւան

ԼՐՏԵՍԱԿԱՆ

# Դատախազությունը՝ Հայաստանում դատապարտված գործակալների մասին

Վերջին տարիներին Հայաստանում հայտնաբերվել է Ադրբեջանի եւ Թուրքիայի հատուկ ծառայությունների հետ համագործակցող 9 գործակալ, եւ բոլորն էլ դատապարտվել են երկարատեւ ազատազրկման, այս մասին երեկ հաղորդագրություն էր տարածել Հայաստանի գլխավոր դատախազության մամուլի ծառայությունը:

Պետական դավաճանության կամ լրտեսության առարկա է ոչ միայն պետական գաղտնիք հանդիսացող նյութերի հավաքումը եւ տրամադրումը օտարերկրյա պետության հետախուզությանը, այլեւ՝ պետական գաղտնիք չհանդիսացող այլ տեղեկությունների հավաքումն ու հաղորդումը, ընդհանրապես ամեն մի տեղեկություն, որ թեեւ պետական կամ ռազմական գաղտնիք չէ, սակայն կարող է օգտագործվել ի վնաս Հայաստանի Հանրապետության: Պետական դավաճանության հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն ՀՀ քաղաքացին, իսկ լրտեսության՝ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը:

Հայաստանի դատական մարմիններում վերջին տարիներին քննվել է այսօրինակ բնույթի 5 քրեական գործ՝ 9 անձի վերաբերյալ, ընդ որում՝ դրանցից Մուրադ Բոջոլյանը, Անդրեյ Մազիեւը, Նինա Շիլինան, Իվետա Ֆիլկովան, Էդգար Ֆիլկովը, Ալեքսանդր Գասպարյանը, Գեւորգ Հայրապետյանը դատապարտվել են պետական դավաճանության (ՀՀ քրեական օրենսգրքի 299 հոդված), իսկ ՌԴ քաղաքացի Ռուստեմ Վալիախմետովը եւ ԻԻՀ քաղաքացի Բեհնամ Բաղերին դատապարտվել են լրտեսության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 302 հոդված): Նշված բոլոր գործերով ներպետական ատյանները հիմնավորված են համարել առաջադրված մեղադրանքները: Մասնակի բացառություն է միայն Գ. Հայրապետյանի եւ Բ. Բաղերիի քրեական գործը, որի վերաբերյալ դատավճիռ կայացրել է միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, իսկ Վերաքննիչ դատարանը դեռ չի սկսել քննությունը:

Եվրոդատարան հասել է մեկ բողոք՝ Մուրադ Բոջոլյանն ընդդեմ ՀՀ կառավարության, եւ մերժվել, քանզի Եվրոդատարանը գտել է, որ Բոջոլյանի կողմից նման տեղեկությունների հաղորդումը արտասահմանյան հետախուզական ծառայություններին իրական վտանգ էր ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը: Այնուհետեւ գլխավոր դատախազությունը մեկ առ մեկ անդրադարձ է անում վերը նշված բոլոր գործերին՝ նկարագրելով դատապարտման հիմքերը, մեղադրանքն ու դրա ապացույցները՝ որպես ավարտ հարկ համարելով նշել. «Հատկանշական է, որ լրտեսության հիմնական շարժառիթը վերը նշված բոլոր գործերով եղել է նյութական շահը, սա բնորոշ է գրեթե բոլոր երկրներում այդ բնույթի հանցագործություն կատարած անձանց, շատ քիչ դեպքերում է լինում այլ շահ, օրինակ՝ գաղափարական: Հետախուզության եւ հակահետախուզության գործակալները, ինչպես նաեւ բացառություն չկազմող վերը նշված բոլոր գործերով լրտեսություն կատարած անձինք ունեցել են նախապես հորինված, ինչպես հետախուզության գործակալներն են ասում՝ «լեգենդ», եւ իրենց բուն գործունեությունը փորձել են քողարկել կոմերցիոն, լրագրողական կամ այլ գործունեությամբ՝ օգտագործելով իրենց կենսագրությունը, մասնագիտությունը, նախկինում ունեցած արժանիքները»: **Ս. Խ.**

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԿԻԵՎՈՒՄ

# «Վարչական դատավարություն եւ վարչական իրավունքի կիրառման պրակտիկա»

«Նման գիտաժողովները պետությունների համար արդյունավետ հարթակ են փորձի փոխանակման եւ համակարգում ճիշտ եւ ռացիոնալ բարեփոխումներ կատարելու համար: Գիտաժողովը նաեւ առիթ էր վարչական դատավարության եւ վարչական իրավունքի կիրառման համակարգի ձեռքբերումներն ու բացթողումներն ամփոփելու համար», այսպես է գնահատում «Վարչական դատավարություն եւ վարչական իրավունքի կիրառման պրակտիկան» թեմայով եռօրյա գիտաժողովի արդյունքները փաստաբան **Արա Զոհրաբյանը**:

Հիշեցնենք, որ գիտաժողովը կայացել է 2 շաբաթ առաջ, Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում, որին մասնակցել են փորձագետներ Հայաստանից, Գերմանիայից, Մոլդովայից, Վրաստանից, Ուկրաինայից, Բելառուսից, Ադրբեջանից, ինչպես նաեւ Ղազախստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից:

Ինչպես նշեց գիտաժողովի մասնակից, փաստաբան Արա Զոհրաբյանը, գիտաժողովի մասնակիցները երեք օրվա ընթացքում քննարկել են անցումային շրջանում գտնվող երկրների վարչական դատավարության մոդելները, վարչական դատավարությունների ընթացքում նմանազույն չափորոշիչների ապահովման, վարչական իրավունքի անհրաժեշտ պաշտպանման վերաբերյալ հարցեր:

«Յուրաքանչյուր պետություն փորձում էր ներկայացնել վարչական դատավարության եւ վարչական իրավունքի կիրառման սեփական պրակտիկայի հնարավոր դրական կողմերը: Սակայն Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ) շնորհիվ գիտաժողովին մասնակցում էին նաեւ քաղաքացիական հասարակության ինստիտուտի ներկայացուցիչներ, որոնք հետեւում էին զեկույցների չեզոք ներկայացմանը, այսինքն՝ որպեսզի ներկայացվեին ոչ միայն դրական երեւույթները, այլեւ բացթողումներն ու փոփոխման ենթակա դրույթները»,- ասաց Արա Զոհրաբյանը:

Փաստաբանի փոխանցմամբ, քննարկվել են նաեւ վարչական իրավունքի կիրառման փորձը ինչպես անցումային երկրներում, այնպես էլ եվրոպական մի շարք պետություններում: Գիտաժողովի մասնակիցները անդրադարձել են նաեւ հրապարակային կառավարման օրգանների գործունեության, հասարակության անվտանգության ու հասարակական կարգի, այդ թվում եւ հավաքների իրավունքի մասին հարցերին:

Հիշեցնենք, որ «Վարչական դատավարություն եւ վարչական իրավունքի կիրառման պրակտիկան» թեմայով եռօրյա գիտաժողովն անցկացվեց մի շարք գերմանական փորձագիտական կազմակերպությունների նախաձեռնությամբ, մասնավորապես Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ) ակտիվ աջակցությամբ:

# Կրթություն

### 20 տարի առաջ

Ապրում էինք ԽՍՀՄ վերակառուցման տարիներում, որոնք, հակառակ խոստումներին, փլփլեցին հսկա երկրի ինչպես տնտեսությունը, այնպես էլ խիստ զգայուն կրթության ոլորտը: Առաջացան նոր՝ մինչ այդ խորթ արժեքներ, որոնցից շատերը, ցավոք, այսօր էլ շարունակում են տեղ ունենալ կոնկրետ հայ հասարակությունում: Հենց այդ տարիներին պրոֆտեխնիկական ուսումնարանի տնօրեն **Աշոտ Ալիխանյանը** մտադրվեց ստեղծել օժտված երեխաների բացահայտման եւ նրանց կրթությունը կազմակերպող հաստատություն. «Այդ տարիներին մեր ժողովրդի համար պարզորոշ ուրվագծվում էր անկախությունը, եւ շատերի համար պարզ էր, որ մեր ժողովրդի եւ հանրապետության միակ հարստությունը մտավոր ներուժն է», ասում է ճեմարանի հիմնադիր տնօրեն Ալիխանյանը: 1990-ին ներկայացվում է նոր կրթօջախ ստեղծելու ծրագիր, որն արժանանում է կառավարության հավանությանը: Ալիխանյանը հիշում է, որ կային մեծ դժվարություններ կրթօջախը ճեմարան անվանելու հետ կապված: «Շատերին թվում էր, թե անպայման պետք է կապված լինի հոգեւոր կրթությանը՝ մոռանալով Մոսկվայի Լազարյան, Ղրիմի, Պոլսի եւ այսօր էլ Սիրիայում ու Լիբանանում գործող հանրակրթական ճեմարանները: Ճեմարան անվանման համար մենք պարտական ենք Վազգեն Առաջին կաթողիկոսին, որը ողջունեց եւ օրհնեց այդ գաղափարը», հիշում է տնօրենը:

1997-ին արդեն կրթության եւ գիտության նախարարի հրամանով ճեմարանը վերակազմավորվում է գիտակրթական համալիրի, ինչը թույլ էր տալիս ստեղծել կրտսեր եւ միջին դպրոցներ: Այս հանգամանքն, անշուշտ, շատ կարեւոր էր, քանի որ հնարավորություն էր ընձեռվում շնորհալի երեխաներին հայտնաբերելու ավելի վաղ տարիքից: Նույն տարում եւ հենց այս նպատակով Նոր Նորքի քաղաքապետարանը ճեմարանին նվիրեց լուծարված մանկապարտեզի շենքը, իսկ 1999-ին ՀՀ կառավարության որոշմամբ ճեմարանին հատկացվեց Հանքավանի «Հեքիաթ» ամառանոցը՝ սաների եւ աշխատակիցների ամառային հանգիստը կազմակերպելու համար: «Մեր ճանապարհը՝ դժվարությունների հաղթահարումը, պայքար էր անգրագիտության, անարդարության, բացասական երեւույթների դեմ՝ հանուն ինքնության պահպանման: Այդ ճանապարհին մենք շատ քիչ օգնություն ենք ստացել: Բայց այն օգնությունը, որ ստացել ենք ազգանվեր մարդկանցից, ես շատ բարձր եմ գնահատում: Ես շնորհակալ եմ նաեւ նրանց, որոնք խանգարել են մեզ, քանի որ այդպես նրանք մեզ թույլ չեն տվել լճանալ, թուլանալ: Նրանք նպաստել են մեր առաջընթացին եւ մշտապես ամուր ու զգաստ լինելուն», ասում է Աշոտ Ալիխանյանը:

### Այսօր

Իր 20-ամյա հոբելյանի նախաշեմին՝ «Շիրակացի» ճեմարանը 5 տարվա փորձաշրջան անցնելով «Ռաունդ սքվեր» միջազգային դպրոցների համաշխարհային ասոցիացիայում, դարձել է վերջինիս լիիրավ անդամ: Այս ասոցիացիայում ներառված դպրոցներում, բացի հիմնարար գիտելիքներից, սաների մեջ ձեւավորվում են նաեւ մարդասիրական, քաղաքացիական եւ հոգեւոր բարձր արժեքներ: Իսկ 2010-ի ուսումնական տարին ճեմարանը սկսեց նույնպես հրաշալի գնահատականով. «Մայքրոսոֆթ» ընկերությունը սեպտեմբերին «Շիրակացի» ճեմարանը ճանաչեց աշխարհի 56 ամենաառաջավոր նորարար դպրոցներից մեկը:

Ճեմարանում հայաստանցի սովորողների հետ սովորել եւ սովորում են հայ ու օտարազգի աշակերտներ ԱՄՆ-ից, Կանադայից, Մեքսիկայից, Իտալիայից, Ավստրիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից, Հնդկաստանից, Ռուսաստանից եւ այլն: Ճեմարանում ուսուցիչներն ընտրվում են մրցույթով, այսօր նրանցից 14-ը գիտությունների թեկնածուներ են: 20 տարիների ընթացքում ճեմարանը տվել է 1090 շրջանավարտ: Նրանցից շատերը իրենց կրթությունն են շարունակում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական, Հարվարդի, Օքսֆորդի, Քեմբրիջի եւ այլ հզոր համալսարաններում: Մի շարք նախկին ճեմարանականներ այսօր կայացած գիտնականներ են, գործարարներ, քաղաքական գործիչներ: Ճեմարանն ունի իր թերթը, օրհներգը, հիմնվել է «Անբասիր ծառայության համար» մեդալը, կրթօջախի ջանքերով լույս է տեսել «Անանիա Շիրակացի» գիրքը: Ճեմարանն ունի նախակրթարան, կրտսեր դպրոց, որը հանրապետության միակ դպրոցն է, որտեղ ուսումնական գործընթացն իրականացվում է միջազգային բակալավրիատի ինտեգրված ծրագրով, միջին եւ ավագ դպրոցներ, կիրակնօրյա դպրոց: Արտաուսումնական կառույցներից ճեմարանականները հնարավորություն ունեն հաճախելու պարի խմբակ (ստուդիա), թատերական ստուդիա, բասկետբոլի եւ սեղանի թենիսի սեկցիաներ: Գործում են պատանի ծրագրավորողների, օտար լեզուների խմբակները, համակարգչային եւ Web դիզայնի կենտրոնը, կերպարվեստի եւ հագուստի մոդելավորման ստուդիան: Ճեմարանն ունի նաեւ երգչախումբ, հոգեբանական կենտրոն, հանրակացարան, հարուստ գրադարան, առանձին բժշկական եւ տրանսպորտային ծառայություն, վերջինս իրականացնում է սաների անվճար փոխադրումը: Նախկին ճեմարանականների ջանքերով ստեղծվել է անգամ «Ճեմարանական սաների միություն» հասարակական կազմակերպությունը, ինչի առկայությունը միայն ապացուցում է, որ ճեմարանականը մշտապես հավատարիմ է մնում իր կրթօջախին, այնտեղ սովորած ու սերտած սկզբունքներին ու առաքելությանը:

### Ո՞վ է ճեմարանականը

Հայրենիքին նվիրված ու պատասխանատու իր ժողովրդի հանդեպ, մարդու իրավունքների եւ համամարդկային արժեքների կրող ու պաշտպան, ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակված քաղաքացի, ազնիվ, բարեկիրթ ու սկզբունքային, գթասիրտ ու կարեկցող, ներողամիտ ու անհիշաչար: Ճեմարանականը պատրաստ է ծառայելու հանրությանը, լինելու շրջակա միջավայրի ու բնության պաշտպանը, օրինապահ ու նախաձեռնող, հաղորդակցվող ու բազմակողմանի զարգացած: Առաջին հերթին ազգային մտածողությամբ ու քաղաքացիական գիտակցումով ճեմարանականը պարտավոր է նաեւ դրսեւորել հանդուրժողականություն, ունենալ առողջ ապրելակերպ, գրավոր ու բանավոր խոսքի կուլտուրա: Ճեմարանականը պետք է կարողանա ճիշտ գնահատել իր հակումներն ու կարողությունները համապատասխան մասնագիտություն եւ աշխատանք ընտրելիս, ինչպես նաեւ պետք է պատասխանատվություն ունենա ստեղծելու ամուր եւ ներդաշնակ ընտանիք՝ իր դավանած սկզբունքներով դաստիարակելու առողջ հասարակության շարքերը լրացնող սերունդ: Այսպիսի առաքելություն իրագործելու համար ճեմարանականը, անշուշտ, մանկավարժական, մարդկային շփում-դաստիարակումից բացի, անցնում է 30 առարկաներ, որոնց մեջ նաեւ՝ համաշխարհային մշակույթի պատմություն, սոցիոլոգիա, գյուտարարական ստեղծագործություն, հռետորական արվեստ, հոգեբանություն, ասպետաբանություն, պարարվեստ: Ուսումնական գործընթացը տարվում է երկու ուղղությամբ՝ բնական գիտությունների եւ հումանիտար:

# «Շիրակացի» ճեմարան

## *Ամեն մի ածական ավելորդ է*

***Երեւանի Նոր Նորք համայնքի Արտեմ Միկոյանի 35 հասցեն ոմանց կարող է հայտնի չլինել, սակայն արդեն երկու տասնամյակ հենց այդ հասցեից «դուրս են գալիս» ազգային ոգուն եւ մեր ժողովրդի լավագույն ավանդույթներին հավատարիմ հայ երիտասարդներ՝ ստացած բազմակողմանի կրթությամբ, օտար լեզուների փայլուն իմացությամբ, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին ենթարկելու ընդունակ:***

***Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան գիտակրթական համալիրը 20 տարեկան է, եւ արդեն քանի տարի այս կրթօջախում բոլոր սովորողների համար ապահովված են հավասար մեկնարկային պայմաններ եւ իրավական երաշխիքներ, արդեն քանի տարի հանրապետության լավագույն բուհերը համալրվում են ճեմարանականներով, ու արդեն քանի տարի միջազգային տարբեր դպրոցական օլիմպիադաներից ճեմարանականը վերադառնում է հաղթանակած:***




### Օպերայի եւ բալետի ազգային թատրոնը՝ ազգային դպրոցին

Նոյեմբերի 28, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն: «Շիրակացի» ճեմարանը ազգային հիմքով եւ ինտերնացիոնալիզմի ոգով տոնեց իր 20-ամյակը: Շնորհավորելու եւ գնահատելու էին եկել ՀՀ վարչապետը, մշակույթի նախարարը, կրթության եւ գիտության փոխնախարարը, պատգամավորներ, օտարերկրյա դեսպաններ, պարզապես հյուրեր, եւ անշուշտ, ինչպես հենց իրենք նշեցին՝ «սուրբ ճեմարան» վերադառնալու հնարավորությունը բաց չէին թողել շրջանավարտները, որոնց շարքերում՝ արդեն իսկ ազդեցիկ ու հարգարժան մարդիկ: ՀՀ ԱԺ-ի «Պատվո մեդալով» պարգեւատրվեցին ճեմարանի տնօրեն Աշոտ Ալիխանյանը, մի շարք ուսուցիչներ: Վարչապետ Տիգրան Սարգսյանը նույնպես վարչապետի շքանշանով ու շնորհակալագրերով պարգեւատրեց ճեմարանի մանկավարժներին, հնչեցին հանրապետության վաստակավոր գործիչների շնորհավորանքներ: Իսկ բեմում ճեմարանի սաները... պարում էին՝ հայկական, ռուսական, իտալական, վրացական, հունական, հնդկական պարեր. նույնպիսի հեշտությամբ ու վարպետությամբ, ինչպես սովորում են աշխարհի տարբեր ժողովուրդների արժեքները, նրանց հարգելու կարողությունը՝ չմոռանալով ու անընդհատ շեշտելով, որ այս ամենը, 20-ամյա ճեմարանն առհասարակ՝ ազգային, հայկական հիմք ունի:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

**ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

# Երբ սիրտը տաք է...

Համոզմունքներիդ մեջ երբ անկեղծ ես ու ցանկությունդ է իրագործել դրանք, ճանապարհներ կգտնվեն:

**Աննա Ղազանչյանի** հետ ծանոթանալուս առիթը Հայաստանի մանկատներից մի քանիսի հետ նրա բարեգործական ծրագրերն էին, որ տարիներ արդեն իրագործում է անձնական հնարավորությունների սահմաններում: Ծնվել է Երեւանում, միջնակարգ կրթությունից հետո մասնագիտացել է բժշկական համալսարանում, քսան տարի առաջ տեղափոխվելով Միացյալ Նահանգներ՝ շարունակել է կատարելագործել մասնագիտությունը: Այժմ, սակայն, աշխատանքային գործունեության դաշտը Wall Street-ն է՝ բիոտեխնոլոգիաների ներդրումային ոլորտում:

Երբ ամուսնությունից մի որոշ ժամանակ անց երեխա չէր ունենում, երիտասարդ ընտանիքը Հայաստանից երեխա որդեգրելու որոշում կայացրեց: Այս առիթով էր, որ Աննան ամուսնու հետ այցելեց Գյումրիի «Թռչունյաց տուն» եւ «Տիրամայր Հայաստան» մանկատներ: Ճակատագիրը սակայն անակնկալ մատուցեց. որդեգրության փաստաթղթերը պատրաստելու ընթացքում Աննան հղիացավ, խոստացավ ինքն իրեն եւ Աստծուն՝ օգտակար լինել Հայաստանի մանկատներին: Ամուսիններով շատ ուրիշ անձանց հետ «Թռչունյաց տան» կնքահայր ու կնքամայր դարձան:

«Կարծում եմ՝ Հայաստանում թե արտերկրում ապրող ամեն հայի պարտավորությունը պետք է լինի օգտակար լինել մանկատներին: Այդ երեխաներին տեսնելուց հետո անհնար է նրանց մոռանալ: Կարծես նույն ցավով են տառապում, 10-12 տարեկան՝ բայց ժամանակից շուտ են մեծացել: Ասում են՝ մենք այստեղ բոլորս նույն ցավը ունենք, իրար հասկանում ենք, խնամք ենք տանում միմյանց:



Նրանցից մի մասն ունի ծնողներ, բայց լքված է: Գուցե ծնողը չի էլ ցանկացել դա, բայց ստիպված է արել, գիտի, որ երեխան մանկատանը գոնե կսնվի, գիշերը փողոցից չի մրսի»:

Վայթփլեյնսում (Նյու Յորք), որտեղ այժմ ապրում է Աննան իր ընտանիքով, ինչպես ամենուրեք է սփյուռքում, հայերը համախմբված են եկեղեցու շուրջը: Տեղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ազգային կյանքի կենտրոնատեղի է նաեւ, որտեղ շատ հայեր ներգրավված են Հայաստանին եւ հատկապես մանկատներին օգնելու աշխատանքներում: Վերջերս Ճոճկան գյուղի Սբ Աստվածածին նորոգված եկեղեցու օծման արարողությանը ներկա էր նաեւ Աննան՝ իր դուստր եւ մոր հետ: Եկեղեցու բարենորոգումներն իրականացվել են Վայթփլեյնսի հայկական եկեղեցու աջակցությամբ:

Մանկատներ այցելելիս Աննային նախեւառաջ հետաքրքրում են առաջնահերթ կարիքները: Առաջին անգամ նա նկատել էր երեխաների խաղաստեղերի սառը, գրանիտե հատակը եւ ամուսնու հետ որոշել մանրահատակով փոխարինել դա, եւ իրենք էլ խփել են: «Կյանքումս առաջին անգամ էի անում», ասում է նա: Հաջորդ անգամ խոհանոցային պարագաներ են անհրաժեշտ եղել, իսկ այս վերջին այցին՝ փամփերսներ. «Ես մի անձ եմ եւ հիմնադրամ էլ չունեմ, բայց ավելի մեծ օգնություններ եմ ուզում անել: Մտածեցի եւ ձեւը գտա»:

«Mariam and Anna jewerly»՝ այսպես անվանեց նա իր նորաստեղծ ընկերությունը, որտեղ պատրաստված վզնոցների վաճառքի ողջ հասույթը տրամադրվում է Գյումրիի «Թռչունյաց տան» (վայելում է «Գեւորգ Սոմջյան» ֆոնդի հովանավորությունը) կարիքներին: Առաջին փորձը հաջողությամբ իրականացվեց Վայթփլեյնսի հայկական եկեղեցում եւ գոյացած շուրջ 4.000 դոլարը փոխանցվեց մանկատուն: Հաջորդը՝ դստեր դպրոցում կատարվեց: Գնումներ կարելի է անել նաեւ www.mariamandannajewerly.com կայքէջով: Համապատասխան դրամական չեկը գրվում եւ փոխանցվում է «Թռչունյաց տան» անունով: Մանկատնից փոխադարձաբար ստացվում են հաստատող տեղեկություններ:

Իր բարեգործական մտահղացումները, այս ուղղությամբ ունակություններն ու կարողությունները ավելի արդյունավետ դարձնելու համար Աննան խորհրդակցում է փորձառու մարդկանց հետ: Հիացմունքով է խոսում ամերիկահայ բարերար, «Թռչունյաց տան» Հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ Հերման Խնդիրյանի մասին: «Վերադարձիս, ասում է, պետք է հանդիպեմ Կարո Արմենին, որ նույնպես ներգրավված է այս գործում եւ լուրջ աշխատանքներ է տանում»:

Սակայն մինչ այդ մի շարք մտահղացումներ իրագործել է եւ ուրիշ ծրագրեր էլ ունի: Երբ նա պատմում էր այս մասին, խաժ աչքերի կայծկլտուն ցոլքերը դիմացինին փոխանցում են այն պարզ ճշմարտությունը, որ բարիք գործելու համար առանձնակի ճիգեր կամ ֆինանսական մեծ կարողություններն այդքան էլ պարտադիր չեն, ընդամենը՝ կամեցողություն, ազնիվ մղում եւ իհարկե՝ տաք սիրտ՝ հավատի... վերջին լուման եկեղեցու գանձատուն գցած կնոջ արարքի պես:

«Բարեգործությունը հոգեկան մեծ բավարարություն է տալիս», ասում է Աննան ու պատմում դստեր ծննդյան օրերից մեկի մասին. «Այնտեղ, Միացյալ Նահանգներում, այստեղ էլ, իհարկե, ծննդյան օրերին նվերներ են տալիս: Մի մասը երեխան հավանում է, մի որոշ մասն էլ արդեն ունի, երբեմն այնքան շատ, որ ավելորդ է. սպառողական մտածելակերպ է սա: Աղջկաս տարեդարձի օրը մտերիմներիս ասացի, որ Մարիամիկը խնդրել է՝ իրեն հատկացվելիք նվերի դրամը փոխանցեք «Թռչունյաց» հոմին: (Եվ իսկապես, ինքը գիտի, որ վզնոցները մանկատան երեխաների համար են): Այդպես էլ արվեց. հավաքված 1000 դոլարը փոխանցվեց մանկատուն: Իսկ «Թռչունյաց տանը» 1 տարի մեկ երեխա այս գումարով կարող է սնվել, հագնվել, ուսում ստանալ: Մինչդեռ այդ խաղալիքները մի կարճ ժամանակ անց աղբն էին նետվելու»:

Իր այս ծրագրի մաս է կազմում նաեւ մասնակիցների ընդլայնումը, հատկապես՝ երիտասարդների: Որոշել է աշխատել տեղի երիտասարդական հայկական կազմակերպության անդամների հետ՝ նրանց ներգրավելու բարեգործական ծրագրերում: Մոտեցող Ծննդյան տոներին ընդունված սովորույթ է նվերներ տալը: «Նրանց հորդորելու եմ, որ խնդրեն նվիրատուներին իրենց հատկացված գումարի կեսը փոխանցել Գյումրիի մանկատուն: Ուզում եմ՝ նրանք էլ այդ զգացումը ապրեն, շնորհակալություն ստանան մանկատնից»:

Բարեգործությունը շնորհ է, բայց պետք է հոգու մեջ լինի այդ սերը եւ պահանջը նաեւ, որպեսզի տրվի այն: «Ճշմարիտ բարեգործությունը լուռ է արվում, չպետք է անունդ հնչի: Սիրտս այդպես է ասում, բայց միտքս՝ այլ բան, բայց եթե այս հոդվածը կարդալուց հետո թեկուզ 1-2 հոգի էլ սկսի օգնել մանկատներին, ուրեմն արդարացված է:

Մարդիկ կարծում են՝ վատ գործը վարակիչ է, բայց լավ գործն էլ վարակիչ կարող է լինել, եթե ճիշտ արվի»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Ամերիկացի դիվանագետների 250 հազար գաղտնի նամակ WikiLeaks-ում

Գաղտնի փաստաթղթերի հրապարակման մեջ մասնագիտացած WikiLeaks կայքը նոյեմբերի 28-ի երեկոյան աշխարհի մի շարք առաջատար լրատվամիջոցներին տրամադրել է ամերիկացի դիվանագետների ավելի քան 250 հազար գաղտնի նամակների, հեռախոսագրությունների եւ հաղորդագրությունների տեքստեր: Հրապարակված նամակագրությունը ներառում է բազմաթիվ երկրների, կաշառակերության նկատմամբ ԱՄՆ արտաքին քաղաքական ռազմավարությանը վերաբերող տվյալներ եւ մի շարք պետությունների ղեկավար գործիչների բնութագրեր: WikiLeaks-ի հայթայթած գաղտնի փաստաթղթերը հրապարակվել են իտալական El Pais, ֆրանսիական Le Monde, գերմանական Der Spiegel, բրիտանական The Guardian եւ ամերիկյան The New York Times թերթերում:

Մասնավորապես «Գարդիան» թերթը գրում է, որ Սաուդյան Արաբիայի ղեկավարները ԱՄՆ իշխանություններին գաղտնաբար խնդրել են ավիահարվածներ հասցնել Իրանին: Բացի դրանից, ամերիկացի դիվանագետներին իբր հանձնարարված է հետեւել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Աշխարհում լայն արձագանք կարող են հարուցել ԿԺԴՀ վարչակազմի հավանական անկումից հետո երկու Կորեաները միավորելու ԱՄՆ-ի ծրագրերը եւ «Ալ Ղաիդայի» սաուդցի հովանավորների հետ կապված մանրամասնությունները: Բացի դրանից, փաստաթղթերը որոշ տվյալներ են պարունակում հանցաշխարհի հետ Ռուսաստանի իշխանությունների հնարավոր կապերի մասին:

Հարկ է նշել, որ տարածված նյութերի մեջ շատ բնութագրեր են տրվում շատ երկրների ղեկավարների: Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինին անվանում են «ալֆա-արու» եւ ավտորիտար մեթոդների հետեւորդ, որի ղեկավարման անհատական ոճը թույլ է տալիս զուգահեռներ անցկացնել Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի հետ: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը ամերիկացի դիվանագետների նամակներում բնութագրվում է «խամրած» եւ «անվճռական» մակդիրներով: Այդ մասին հաղորդում է «Շպիգելը» նոյեմբերի 29-ի համարում: Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը համարվում է «պարանոիկ», իսկ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը իբր «խուսափում է ռիսկի դիմել եւ հազվադեպ է դրսեւորում ստեղծագործական մոտեցում»: Ինչ վերաբերում է Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին, դիվանագիտական գաղտնի նամակներում նրան համեմատում են Ադոլֆ Հիտլերի հետ:

2010-ի փետրվարի 24-ին ուղարկված դիվանագիտական հեռագրերից մեկում նշվում է, որ Իրանը ԿԺԴՀ-ից ստացել է R-27 տիպի 19 հրթիռ, որոնց հզորությունը զգալիորեն գերազանցում է ԱՄՆ-ում պաշտոնապես հայտնի տվյալները: «Նյու Յորք թայմսը» այս կապակցությամբ նշում է, որ մինչեւ վերջերս փորձագետները կարծում էին, թե Իրանում կարող են լինել նման հրթիռների միայն առանձին բաղադրամասեր:

«Գարդիան» թերթը ընդգծում է, որ Սաուդյան Արաբիան ԱՄՆ-ին գաղտնի խնդրում է օդային հարված հասցնել Իրանին, մինչդեռ ինքը «Ալ Ղաիդայի» գլխավոր հովանավորներից մեկն է: Ամերիկացիների մեկ ուրիշ լավ բարեկամ՝ Քաթարը, գրեթե ոչինչ չի անում ահաբեկչության դեմ պայքարելու համար:

Հետաքրքրական բացահայտումներից մեկը վերաբերում է C-300 հրթիռներին: Պարզվում է, որ Ռուսաստանը Իրանին խոստացած զենիթահրթիռային C-300 համալիրները այդ երկրին չմատակարարելով՝ իսրայելական անօդաչու թռչող սարքեր ստանալու դիմաց Իսրայելին 1 միլիարդ դոլար է առաջարկել:

WikiLeaks-ի հրապարակած 250 հազար փաստաթղթերի մեծ մասը վերաբերում է 2006-2010 թվականներին: Դիվանագիտական գաղտնի փաստաթղթերի հրապարակումը կարող է մի շարք խոշոր սկանդալների առիթ դառնալ, այդ թվում՝ ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների միջեւ: Սպիտակ տան մամլո քարտուղար **Ռոբերտ Գիբսը** արդեն հայտարարել է. «WikiLeaks-ի բացահայտած տեղեկությունները վտանգ են ստեղծում ամբողջ աշխարհում աշխատող մեր դիվանագետների, հետախույզների եւ այլ անձանց համար»: Նրա խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:

# Դիվանագիտությունը՝ քողազերծված

*1-ին էջից*

**Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուի պարագայում որպես որակավորում օգտագործվել է «ծայրահեղ վտանգավոր» պիտակը, այն բացատրությամբ, թե Դավութօղլուն իր իսլամիստական ներգործությունը կարող է ունենալ Էրդողանի վրա:**

**Վաշինգտոնին, ըստ գաղտնազերծված նամակագրությունների, անհանգստացնում է Դավութօղլուի նոր օսմանիզմը: «ԱՄՆ-ն անհանգստացած է «խելքը թռցրած» Ահմեդ Դավութօղլուի նոր օսմանիզմի ուղեգծից: Ըստ ամերիկացի դիվանագետների՝ Թուրքիայի առանցքն աստիճանաբար տեղաշարժվում է դեպի Արեւելք: Թուրքիայի համար դժվար է դառնալ Եվրոմիության անդամ: Թուրքիան փակ շրջանի մեջ է, ու այնտեղ չեն իրականացվում ԵՄ չափանիշներով անհրաժեշտ բարեփոխումներ», այսպիսի եզրակացություններ են արել ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաները:**

**Մի շարք հետաքրքրական տեղեկություններ էլ WikiLeaks կայքում վերաբերում են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ ԱՄՆ փոխպետքարտուղար Ուիլյամ Բըռնսի հետ հանդիպման մասին պատմող փաստաթղթերին: Ամենից առաջ, պարզվում է, Ալիեւ կրտսերը «ԱՄՆ ներկայացուցչին խոստացել է» համարժեք չարձագանքել անցագրային ռեժիմը վերացնելու Իրանի քայլին:**

**Ավելին, Ադրբեջանն, ըստ Ալիեւի, պատրաստվում է պարսկերենով նոր հեռուստաալիք հիմնել՝ տեղեկություններ սփռելու Իրանի տարածքում այն մտահոգությամբ, թե Ադրբեջանում հեռարձակվող իրանական ադրբեջանալեզու «Սեհեր» հեռուստաալիքն իր լուսանկարն օգտագործում է Դավթի աստղի համադրմամբ: Սա, ըստ Ալիեւի, հակաադրբեջանական սադրանքներից մեկն է: Դրա, եւ ոչ միայն դրա համար, Ալիեւը իր պատրաստակամությունն է հայտնել՝ մեկուսացնելու Իրանը: Սա առավել հետաքրքրական է, քանի որ Իրանի մեկուսացման դեպքում այդ երկրում աշխատող նավթային ընկերությունների հետաքրքրությունները կարող են տեղափոխվել Ադրբեջան:**

**Ալիեւ կրտսերը, թերեւս սեփական փառասիրության տվերում, պարզվում է, բացասական կարծիք ունի նաեւ Ռուսաստանի նախագահի մասին, թե Մեդվեդեւին որպես լիդերի ոչ ոք չի ընկալում: Ադրբեջանի նախագահը դժգոհել է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից, թե վերջիններս միասնական դիրքերից չեն հանդես գալիս: Դժգոհության մի մաս էլ բաժին է հանվել Թուրքիային՝ «պարզունակ քաղաքականություն վարելու համար»:**

**Ադրբեջանի նախագահի աշխատակազմի միջազգային հարցերի վարչության պետ Նովրուզ Մամեդովը հայտարարել է, թե Իլհամ Ալիեւ-Ուիլյամ Բըռնս հանդիպման վերաբերյալ ԱՄՆ դիվանագետների պաշտոնական հեռագրում Ադրբեջանի նախագահին վերագրված հայտարարությունները իրականությանը չեն համապատասխանում: Այն դեպքում, երբ Wikileaks-ը չի ներկայացնում կասկածելի տեղեկություններ, այլ միայն փաստաթղթեր, Ադրբեջանում հարկ են համարել փորձել շտկելու իրավիճակը: «Նման հանդիպումներում Ադրբեջանի նախագահը երրորդ կողմի կամ երկրի մասին չի խոսում: ԵԱՀԿ Աստանայի գագաթաժողովին ընդառաջ նման հարցերի առաջ գալը ստիպում է խորհել: Այսինքն՝ նման տեղեկատվության տարածումը գագաթաժողովի անցկացմանը զուգահեռ միջազգային հանրության մեջ որոշ հարցեր է առաջացնում», հայտարարել են Բաքվից: Նշենք, որ Wikileaks-ի հրապարակումների համատեքստում Աստանայի հանդիպումը դիտարկելը բավականին անհուսալի է, քանի որ այդ հրապարակումներում այնքան երկրների ղեկավարներին առնչվող նյութեր կան, որ զուտ Ադրբեջանին վնասելու փորձի մեջ մեղադրանքը ուղղակի մերկապարանոց է:**

**Հայաստանի առնչությամբ Wikileaks-ի հրապարակումներում առկա փաստաթղթերից մեկը Հայաստանի նախագահին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջոն Նեգրոպոնտեի ուղղած նամակն է: 2008 թվականի դեկտեմբերի 24-ին թվագրված նամակում ամերիկացի պաշտոնյան մտահոգություն է հայտնում տարիներ առաջ Հայաստանից Իրան զենքի արտահանման առթիվ:**

**Ըստ նամակի, անհանգստություն է հայտնվում, «ըստ էության, մահաբեր զենքի արտահանման փաստի առնչությամբ»: ԱՄՆ պաշտոնյաները, պարզվում է, հայտնել են իրենց մտահոգությունը Հայաստանից Իրան զենք փոխանցելու մասին, ինչը չի կարող անտեսվել ԱՄՆ կողմից, ավելին, կարող է դիտարկվել պատժամիջոցների կիրառման հարցը: «Եթե պատժամիջոցներ կիրառվեն, դրանք ենթադրում են ԱՄՆ օգնության կասեցում եւ արտահանման որոշ սահմանափակումներ: Նման պատժամիջոցներից խուսափելու համար կարեւոր է, որ համոզիչ ապացույցներ ներկայացնեք առ այն, որ Ձեր կառավարությունը ներկայումս համագործակցում է մեզ հետ»:**

**Իսկ որպես այդպիսի համագործակցություն է ներկայացվում հետեւյալը. Հայաստանի տարածքից զենքի արտահանման վերահսկողություն, երկկողմ համաձայնագիր ԱՄՆ-ի հետ, օրենսդրության համապատասխանեցում եվրոպական չափանիշներին եւ այլն: Նամակին կից ներկայացված տեղեկանքում ասվում է, որ խոսքը դեռեւս 2003 թվականին Հայաստանից Իրան տեղափոխված գնդացիրների մասին է, որոնցից որոշ նմուշներ հայտնաբերվել են 2007 թվականին Իրաքի տարածքում երկու շիա գրոհայինների կողմից ամերիկացի զինվորների վրա հարձակման ժամանակ:**

**«Ես ձեռնպահ կմնամ այլ երկրի ներքին, գաղտնի փաստաթղթերի վերաբերյալ մեկնաբանություն տալուց», անդրադառնալով WikiLeaks կայքի վերջին գաղտնազերծումներին՝ ասել է Հայաստանի նախագահի մամլո խոսնակ Արմեն Արզումանյանը:**

**Ինչեւէ, Wikileaks-ի գաղտնազերծումների առնչությամբ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը հայտարարել է, որ ԱՄՆ պաշտոնության բաժանմունքի համակարգիչներից հանված փաստաթղթերի առնչությամբ ԱՄՆ պետքարտուղարությունը որեւէ մեկնաբանություն չի անում, հիշեցնելով, որ այդպիսի տեղեկությունների գաղտնազերծումը վնասում է ինչպես անհաս մարդկանց, այնպես էլ ժողովուրդների հարաբերություններին: ԱՄՆ դեսպանատունը հիշեցրել է նաեւ, որ առօրյա դիվանագիտական հաղորդագրությունները դիվանագիտական պրակտիկա են, որոնք ամբողջական չեն, կարող են լինել նախնական տեղեկություններ, ուստի դրանք չպետք է դիտարկվեն որպես ԱՄՆ-ի քաղաքականություն:**

**ՍԱԱԴ ՀԱՐԻՐԻԻ ԱՅՑԸ ԹԵՀՐԱՆ**

# Կարդարացվե՞ն Լիբանանի սպասելիքները

**Իրանի Իսլամական Հանրապետության դերակատարումը մերձավորարեւելյան հարցերում աստիճանաբար ավելի է մեծանում, ինչը բնական է, եթե հաշվի առնենք Իրանի տնտեսական եւ քաղաքական հզորությունը: Այս տեսակետն է արտահայտել Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին իրանական IRNA լրատվական գործակալությանը տված հարցազրույցում՝ շաբաթ օրը պաշտոնական այցով Իրան մեկնելուց առաջ: Հարիրիի այցի հիմնական նպատակը երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի եւ գործընկերության ամրապնդումն է եղել, սակայն ուշագրավ է, որ տեղի է ունենում լիբանանյան ներքաղաքական լարված իրադրությանը զուգահեռ: Ավելին, նախորդ շաբաթ լիբանանյան մամուլում տեղեկություններ են տարածվել, որ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով ստեղծված հատուկ տրիբունալը այս հինգշաբթի հրապարակելու է իր որոշումը: Թեեւ Լիբանանի արտգործնախարարությունը հերքել է այս տեղեկատվությունը, բայց մյուս կողմից էլ պարզ է, որ վաղ թե ուշ այդ որոշումը հրապարակվելու է: Նշենք, որ հիմնական մտավախությունը կապված է այն հանգամանքի հետ, որ նախկին վարչապետի՝ սուննի Ռաֆիկ Հարիրիի սպանության մեջ կարող են մեղադրվել Իրանի աջակցությունը վայելող շիական «Հզբոլլահ» կազմակերպության անդամներ: Ըստ վերլուծաբանների՝ դա կնպաստի Լիբանանում սուննի-շիա առճակատման խորացմանը: Սաադ Հարիրին թեեւ հայտարարել է, որ իր հոր սպանության գործում «Հզբոլլահին» չի կասկածում, սակայն մյուս կողմից ընդգծել է ամեն դեպքում ազգային միասնության եւ համերաշխության պահպանման անհրաժեշտությունը: Իսկ Իրանը, ըստ Հարիրիի, կարող է նպաստել Լիբանանի կայունության ամրապնդմանը: «Լիբանանը մեծ հույսեր ունի՝ կապված Իրանի հետ: Մենք հույս ունենք, որ Իրանի իշխանություններն ամեն ինչ կանեն, որ մեր երկիրը քաոսում չհայտնվի», ասել է Հարիրին:**

**Այցի ընթացքում Հարիրին Իրանի իշխանությունների հետ հանդիպումներում քննարկել է նաեւ մերձավորարեւելյան խաղաղության գործընթացը եւ Իրաքի հարցը: Հարիրին այաթոլլա Ալի Խամենեիի հետ հանդիպմանը մերձավորարեւելյան տարածաշրջանի կայունության հիմնական սպառնալիք, ինչպես նաեւ Լիբանանի եւ Իրանի գլխավոր թշնամի է համարել Իսրայելը, ավելին, ըստ նրա՝ Լիբանանն ու Իրանը պետք է համագործակցեն իսրայելական սպառնալիքին դիմակայելու համար: Իսկ Իրանի պաշտպանության նախարար Ահմադ Վահիդին իր հերթին վստահեցրել է, որ Իրանը մշտապես կպաշտպանի Լիբանանը «ագրեսորներից եւ օկուպանտներից»: Սակայն, ըստ վերլուծաբանների, Հարիրին Իրան է մեկնել ստանալու այս երկրի իշխանությունների աջակցությունը՝ Լիբանանում սուննի-շիա առճակատումը կանխելու նպատակով:**

Պատրաստեց
ԼԻԼԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

# Հվ. Կորեայի նախագահը սպառնում է ԿԺԴՀ-ին



Հարավային Կորեայի նախագահ Լի Մեն Բակը ԿԺԴՀ-ին սպառնացել է, որ նրա գործողությունները լուրջ հետեւանքներ կունենան հերթական ագրեսիայի դեպքում: Նախագահը զայրույթ է արտահայտել անցյալ շաբաթ հարավկորեական Յոնփենդո կղզու հրետակոծման կապակցությամբ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

«Եթե Հյուսիսը Հարավի դեմ նոր սադրանքներ ձեռնարկի, ապա անպայման թանկ կվճարի: Հարավային Կորեայի ժողովուրդը հիմա պարզ հասկանում է, որ իր համբերությունը ոչինչ չի տա, բացի ավելի լուրջ սադրանքներից», ասել է Լի Մեն Բակը:

Ավելի վաղ նա անվճռականության համար քննադատել էր երկրի պաշտպանության նախարարին, ապա պաշտոնանկ էր արել նրան: Ներկայումս Յոնփենդոյում եւ Դեղին ծովում գտնվող 4 այլ կղզիներում տեղաբաշխված են մոտ 4000 հավելյալ զինծառայողներ: Միաժամանակ WikiLeaks կայքի վերջին հրապարակումներից հայտնի է դարձել, որ ԱՄՆ-ը եւ Չինաստանը արդեն հարավկորեացիների հետ գաղտնի բանակցություններ են սկսել երկու Կորեաների վերամիավորման հնարավորության շուրջը: Վերամիավորման ակնկալիքները կապված են ԿԺԴՀ-ի տնտեսական անչափ ծանր կացության հետ:

# Օգնության դիմաց Իռլանդիան ստանձնել է մի շարք պարտավորություններ

Եվրոմիության 27 երկրների ֆինանսների նախարարների բրյուսելյան արտակարգ հանդիպման ժամանակ որոշվել է Իռլանդիային հատկացնել 37,5 մլրդ եվրո ֆինանսական օգնություն, որը տրվելու է վարկերի ձեւով: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Հատկացված գումարից 10 միլիարդը անմիջապես կուղղվի բանկերի պահուստային կապիտալների ավելացմանը: Իռլանդիայի կառավարությունը եւս 25 մլրդ կօգտագործի բանկերին օգնելու նպատակով: Մնացյալ գումարը առաջիկա 4 տարում կծախսվի բյուջեի պակասորդի վերացման համար:

Երկրի իշխանությունները 2010-ին ստիպված կտրուկ մեծացրել են բանկային հատվածի օժանդակմանն ուղղված պետական փոխառությունների ծավալները: Դրա հետեւանքով բյուջեի պակասորդը հասնում է ԵՄ-ում աննախադեպ 32 տոկոսի:

Օգնության դիմաց Իռլանդիան պարտավոր է մինչեւ 2015 թ. բյուջեի պակասորդը հասցնել 3 տոկոսի: Այդ նպատակով կրճատվելու են պետծախսերը եւ սահմանվելու են նոր հարկեր: ԵՄ-ը Իռլանդիային թույլատրել է պակասորդի կրճատման նպատակով օգտագործել նաեւ կենսաթոշակային ֆոնդի միջոցները: Դա թույլ կտա հայթայթել հավելյալ 17,5 մլրդ եվրո:

ԱԶԳ

## Մշակույթ

# Տերյանը արցախցիների շուրթերով

Հայաստանի հանրապետության Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու եւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, հանրապետության մարզերում, Ջավախքում, Արցախում անցկացվում է «Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 2-րդ փառատոնը», որն այս տարի նվիրված է հայ մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանի 125-ամյակին: Փառատոնի ժյուրին արդեն լսել է շուրջ 15.000 մասնակցի ու նրանցից եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք է տվել հանրապետության 8 մարզերից եւ Արցախից 57 ասմունքողի: Դեռ առջեւում երկու մարզից՝ Ջավախքից եւ Երեւանից 2-րդ փուլին կմասնակցեն մոտ օրերս: Փառատոնի 2-րդ եզրափակիչ փուլն անցկացվեց Ստեփանակերտում: ԼՂՀ-ի 7 շրջաններից ու Ստեփանակերտի դպրոցներից 1-ին փուլի 350 մասնակիցներից 44-ը մասնակցեց 2-րդ փուլին, եւ նրանցից 7-ը Երեւանում կմրցեն եզրափակիչում: Ստեփանակերտի մշակույթի պալատում փառատոնի ժյուրիին, որի կազմում էին ԱԺ պատգամավորներ Արտակ Զաքարյանը, Կարինե Աճեմյանը, Տաճատ Վարդապետյանը, ԱԺ նախագահի օգնական Սերգեյ Լոքյանը, ՀՀ ժող. արտիստ Գուժ Մանուկյանը, գրող-հրապարակախոս Ռազմիկ Դավոյանը, բան. գիտ. թեկ. Կարո Վարդանյանը եւ փառատոնի պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանը, դիմավորեցին ու ողջունեցին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, մշակույթի նախարար Նարինե Աղաբալյանը: Ելույթ ունեցողները գնահատանքի խոսքեր հղեցին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հասցեին, նման միջոցառումներ Արցախում իրականացնելու համար եւ շեշտեցին, որ 2-րդ անգամ ասմունքի փառատոն Արցախում կազմակերպելով «շարունակում ենք մեր մեծերի պատգամը՝ կրթել ու դաստիարակել մի նոր սերունդ, որը կկարողանա տեր կանգնել մեր նվաճումներին ու առաջընթացին»: Փառատոնի 44 մասնակիցները պարզապես փայլեցին իրենց հրաշալի ասմունքով, ճիշտ շեշտադրմամբ ու զգացողությամբ արտաբերելով Տերյանի հուզական, սիրային եւ հայրենասիրական բանաստեղծությունները: Փառատոնը շարունակվում է, շարունակվում է նաեւ Տերյանական պոեզիան հնչել մշակութային տարբեր կամարների ներքո: **Մ. Մ.**

# Պատանի հանդիսատեսի թատրոնը տոնում է 80-ամյակը

Երեւանի քաղաքապետարանի Պատանի հանդիսատեսի թատրոնը նշում է իր հիմնադրման 80-ամյակը: Թատրոնը բացվել է 1929թ. նոյեմբերի 29-ին՝ Գ. Սմիրնովի «Պայթյուն» պիեսի բեմադրությամբ: Այդ թատրոնը յուրօրինակ կրթօջախ է դարձել իր հիմնադրման օրվանից, կրթել ու դաստիարակել է սերունդներ:

Տարբեր տարիներին թատրոնը ղեկավարել են բեմի այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են Հրաչյա Ղափլանյանը, Զավեն Տատինցյանը, Երվանդ Ղազանչյանը, Մարատ Մարինոսյանը, եւ ամեն մեկը թողել է իր ուրույն ձեռագիրն ու ասելիքը հայ թատրոնի պատմության էջերում: Այս թատրոնի բեմում խաղացել են հայտնի դերասաններ Պարույր Սանթրոսյանը, Էմմա Վարդանյանը, Իշխան Ղարիբյանը, Արշավիր Ղազարյանը, Պերճ Գեւորգյանը, Զարեհ Տեր-Կարապետյանը, Մարուսյա Թամրազյանը, Գուժ Մանուկյանը, Մայիս Ղարագյոզյանը եւ ուրիշներ, որոնց սկսած գործը այսօր շարունակում են թատրոնի երիտասարդ եւ շնորհալի դերասանները, ներկայացնելով բազմաժանր ու հետաքրքրական խաղացանկ:

Շուրջ 13 տարի Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավարը Հակոբ Ղազանչյանն է: Նրա օրոք թատրոնը նորանոր հաջողություններ գրանցեց իր պատմության մեջ. բազմաթիվ շրջագայություններ տարբեր երկրներ, մասնակցություն հայտնի փառատոների Վրաստանում, Ուկրաինիայում, Բուլղարիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Կիպրոսում, Իրանում, Մակեդոնիայում եւ այլուր...

Երեկ երեկոյան ՊՀԹ-ի 80-ամյա հոբելյանական երեկոյի ընթացքում հնչեց Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնի հիմնը՝ գրված կոմպոզիտոր Ստեփան Բաբա-Թորոսյանի կողմից, եղան բազմաթիվ ուղերձներ, շնորհավորանքներ ու գնահատանքի խոսքեր պաշտոնատար անձանց, թատերասեր հանրության, քաղաքապետարանի կողմից:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Իսկական թատրոնի այցը

«Իսկական թատրոն չունենք», «Հայ թատրոնը մեռել է», միաբերան ասում են չորսբոլորը՝ գիտակ թե անգետ, սիրող թե սիրող: Չափանիշները խախտված եւ գերքաղաքականացած մեր ժամանակներում անգամ մասնագետներն են դառնում՝ ելնելով անձնական համակրանք-հակակրանքներից կամ դիմացինի քաղաքական դիրքորոշումներից: Սակայն դաշտը խորությամբ հետազոտելուց հետո, այնուամենայնիվ, հնարավոր է մի փոքր հանգիստ շունչ քաշել եւ համոզվել, որ՝ չէ՛, իրականում մեր փոքր ու մեծ թատրոնների երկացանկերից կարող ենք առանձնացնել փոքրիշատե հաջողված մեր թատերարվեստի երեսը մի քիչ պարզ անող բեմադրություններ: Մի «Երեք գրոշանոց օպերա» Համազգային թատրոնում, մի «Օֆելյայի ստվերների թատրոն» Գեղագիտության կենտրոնի Փոքր թատրոնում, Սերժ Մելիք-Հովսեփյանի բեմադրած «Ազատ զույգը», «Հովեր» երգչախմբի խմբերգային «Զուգահեռը»... սրանք իմ նախասիրածներն են. բայց լավ, կասի ընթերցողը, իսկ ո՞ւր մնաց Մայր թատրոնը, մեր ակադեմիականը, մի՞թե նա՝ ժամանակին ճաշակ թելադրողն ու հայ թատրոնի ավանդույթները պահող-շարունակողը, ոչինչ չունի՞: Ցավոք, վերջին տարիներին գրեթե չուներ: Սակայն երկրորդ անգամ դիտելով Սունդուկյանի անվան թատրոնում Վահե Շահվերդյանի բեմադրած «Ծեր տիկնոջ այցը» ներկայացումը, զգացի, որ առաջին տպավորությունս անտեղի խաբուսիկ չէր: Որքան էլ մեր հեղինակավոր թատերագետները ժխտեն, մեր համոզմամբ ներկայացումը միանգամայն հաջողված էր, բեմադրությունը եթե ոչ անթերի, ապա միանգամայն գրագետ եւ պատշաճ մակարդակի է, որը դիտելով քիչ թե շատ վերապրում ես մեր ոչ շատ վաղ անցյալի թատերական հարուստ մթնոլորտը, երբ միջակությունն ու ռաբիսը ամբողջությամբ չէին գրավել մեր մշակութային դաշտը, երբ իսկական արժեքն անմիջապես տարբերվում ու գնահատվում էր:

Ֆրիդրիխ Դյուրենմաթի հանրածանոթ թատերախաղը, որի գլխավոր հերոսուհին հայ միլիարդատեր Ցախանասյանն է, մեր հանդիսատեսը պիտի որ հիշի կինոէկրանից՝ Ինգրիդ Բերգմանի դերակատարմամբ, ինչպես նաեւ հայկական հեռուստաբեմադրությունից, որտեղ գլխավոր դերը հիանալի էր կատարել Իվետա Բաբուրյանը: Շահվերդյանի բեմադրության մեջ տիկին Ցախանասյանի դերում մեր թատրոնի կենդանի լեգենդ Վարդուհի Վարդերեսյանն է, որի ուսերին ավելի քան վաթսուն տարվա ստեղծագործական կյանք կա: Դիտելով նրա պլաստիկան, լսելով նրա զրնգուն ձայնը՝ լրիվ մոռանում ես դերասանուհու տարիքը: Հայ թատրոնի պատմության մեջ սա թերեւս աննախադեպ է, երբ դերասանուհին 82-ամյա տարիքում իր վրա է վերցնում ներկայացման ողջ ծանրությունը, իրենով լցնում ամբողջ բեմը: Այո, ասում են, որ Օլգա Գուլազյանը նույն տարիքում աննման Տատիկ էր՝ «Ծառերը կանգնած են մահանում» պիեսում, բայց այդ դերի համար չէր պահանջվում այնքան շարժունություն եւ ծանրաբեռնվածություն, որքան Քլերի Ցախանասյանի կերպարի, որը, ճիշտ է, թեեւ տարբեր պրոտեզներով ծանրաբեռն մի ծեր տիկին է, բայց ի վերջո տատիկի կերպար չէ, այլ արդարության ծարավի մի վրեժխնդիր ճակատագրական կնոջ:

Բարեբախտաբար, ներկայացման մեջ Վարդերեսյանին շրջապատող դերասանների կազմը միանգամայն ապահովում է անսամբլը. սա առաջին հերթին, անշուշտ, վերաբերում է Ալֆրեդ Իլլի դերակատար, մեր թատրոնում եւ կինոյում հիշարժան կերպարներ ստեղծած վաստակաշատ դերասան Կարեն Ջանգիրովին: Հիշարժան կերպարներ են ստեղծել նաեւ Ազատ Գասպարյանը եւ Ռազմիկ Խոսրոեւը:

Այս բեմադրությունը մի թանկ նվեր է, որ տարիների լճացումից հետո Սունդուկյանի անվան թատրոնը պարգեւեց մեր թատերասերներին: Իսկական թատրոնի համուհոտին կարոտ մնացածները եւ այդ համը բնավ չտեսածները թող շտապեն դիտել այն: Սխալված չենք լինի ասել, որ այն նվերի պես է նաեւ Վարդուհի Վարդերեսյանի համար, որի վերջին շրջանի դերակատարումների մեջ սա ամենից հաջողվածն է: Մնում է միայն տարակուսել, թե ինչո՞ւ այդքան սակավադեպ է ներկայացնում Սունդուկյանի անվան թատրոնը «Ծեր տիկնոջ այցը»: Հարգում են տիկին Վարդերեսյանի տարի՞քը. չեմ կարծում, նա միանգամայն ի վիճակի է ավելի հաճախ բեմ ելնել: Դահլիճն էլ լեցուն էր, այնպես որ թատրոն հասկացող իսկական հանդիսատես դեռեւ ունենք: Ուրեմն ո՞րն է նման վերաբերմունքի պատճառը...

**ԳԱԳԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**
**Երեւանի պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դասախոս**

## ԿԱՐՍ, ՉԱՐԵՆՑԻ ՏՈՒՆ

# Ինչո՞ւ ենք իրար խառնվել

**Կարսում գտնվող Եղիշե Չարենցի հայրական տնով ակտիվորեն սկսեցին հետաքրքրվել թուրքերը. նրանք լրատվամիջոցներով մեսեյջ ուղարկեցին՝ հրաշալի իմանալով, որ հիմա մենք իրար ենք խառնվելու: Եվ սկսվե՜ց: «Տխրունու» երիտասարդները պատրաստ են գնալ ու մասնակցել շինարարությանը, Հովիկ Չարխչյանը շտապեց անժխտելի համոզվածությամբ ասել, թե լուսանկարում պատկերվածը Չարենցի հայրական տունը չէ, մոռանալով, որ եթե ասում է սա չէ, պարտավոր է ասել, թե ո՞րն է: Նույն ոգեւորությամբ Դավիթ Գասպարյանը վկայեց իր այցը Կարս եւ դարձյալ նույն համոզվածությամբ պնդեց, թե դա չէ, որովհետեւ տունը եղել է երկհարկանի: Դրան անդրադարձավ նաեւ «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով «Հյուրիեթ» թերթում տպագրված տեղեկությունն այն մասին, թե «հին, խարխուլ տունը զբաղեցրել են թմրամոլները, որի դեմ պայքարում են թաղամասի բնակիչները՝ պահանջելով քանդել կամ վերանորոգել տունը»:**

**Այսպես, ուրեմն, թուրքերը խայծը գցել ու սպասում են: Թուրքերը մի անշուք փողոցում գտնվող այդ կիսափուլ շինության երկու սեփականատեր են հայտնաբերել, իրենց հոր գինն էլ վրան դրել՝ 180 000 դոլար ու սպասում են: Ես համոզված եմ, որ նրանք ավելի շուտ սպասում են սփյուռքահայերի արձագանքին:**





Բայց մի պահ դադար առնենք եւ հանգիստ վերլուծենք, համադրենք ու հակադրենք փաստերը:

Չարենցի հայրական տունն, իրոք, այդ լուսանկարում պատկերվածն է: Ահա անժխտելի վկայությունը՝ Ալեքսանդրյանի «Մղձավանջ» հուշերի գրքում:

Այնտեղ զետեղված աջ լուսանկարում հետեւյալ մակագրությունը կա. «Կարսի Երկաթյա կամուրջը (Կենտրոնի երկարավուն շենքին անմիջապես հաջորդող շենքը (աջից) Աբգար-Աղայի (Չարենցի հոր) տունն է»: Հիմա այդ տուն կոչվածն այնքան էլ տուն չէ. անծածկ մի շինություն է, որի հետ ով ինչպես ուզեցել վարվել է՝ քանդել են երկրորդ հարկը, եւ տակը մնացել է անծածկ, կիսավեր մի խղճուկ շինություն, լցված կենցաղային աղբով, ցեխաջրով ու հողակույտերով: Ներսը՝ բաց երկնքին ի տես, կեղտաջրով լցված: Մուտքի հնաբույր դուռը կա, բայց հանած-կողքի դրած է՝ այն, որպես դուռ, պահպանելու որեւէ բան չունի: Այդ տեղանքը (Չարենցի առջեւ մեղա գալով՝ այսպես անվանենք այդ տանտեղը) որեւէ հետաքրքրություն չի ներկայացրել, մինչեւ 2005 թվականը, երբ 33 հոգանոց խումբը Հայաստանից մեկնեց Կարս եւ Կարսի փոխքաղաքապետին այցելելով՝ Չարենցի հայրական տունն առնելու եւ մշակույթի կենտրոն դարձնելու հարց առաջադրեց: Այդտեղից էլ սկսվեց այս ամբողջ խառնաշփոթը: Փոխքաղաքապետը նախ զարմացավ, թե՝ «Կարսում շատ են նախկին հայկական տները՝ անտեր, բայց բարվոք վիճակում, ինչո՞ւ հենց այս խարխուլ պատերի վրա է ձեր ուշադրությունը»: Նրան բացատրվեց, թե դա հայ մեծանուն պոետի հայրական տունն է: Եվ այս ամենից հետո միայն այդ խարխուլ պատերին հանկարծ տեր հայտնվեց՝ երկու եղբայր, որոնցից մեկն ապրում է Ստամբուլում: Կարսում ապրող այդ տերն ասաց, թե եղբոր հետ կխորհրդակցի եւ գինը կասի: «Խորհրդակցեց» եւ մեկ օր անց հայտնեց գինը՝ 50 հազար ԱՄՆ դոլար: Քաղաքապետարանում մեզ տեղեկացրել էին, որ առք ու վաճառքը պիտի ձեւակերպվի թուրքահպատակի անվամբ (Թուրքիայում օտարերկրացին անշարժ գույք առնելու իրավունք չունի): Մարտին Թադեւոսյանը գտավ թուրքահպատակ հային՝ Տիգրան Ալթունին, ով պատրաստ էր առնելու տունը:

2007 թ. մարտի 11-14-ը Կարս մեկնեց նախաձեռնողների խումբը: Նորից բանակցություններ Կարսի քաղաքապետարանում:

Մենք՝ միամիտներս, այնքան բացահայտ ապրումների մեջ էինք Չարենցի ոգեղեն կերպարի նկարագրության ու այդ տունը մշակութային կենտրոնի վերածելու ցանկության մեջ, որ նրանք անմիջապես որսացին պահը՝ սակարկումների մեջ չափն անցնելով եւ գինը քառապատկելով:

Փոխքաղաքապետ (քաղաքապետը բացակայում էր քաղաքից) Գոսկուն Ուլիմանուն ոգեւորեցին մեր ծրագրերը՝ ասվեց, որ այդ ավերակի վրա վեր է հառնելու երկհարկանի մի շինություն, որի առաջին հարկը կարսեցիների համար կծառայի որպես թեյարան: Մեր ոգեւորությունն ի վնաս մեզ աշխատեց՝ Չարենցի հայրական տան «տերերը» շարունակեցին սակարկել, եւ գինը դարձյալ կրկնապատկվեց:

Եւս մի կարեւոր հանգամանք շեշտեմ: Բանն այն է, որ Կարսում շատ կան լավ պահպանված տներ, որոնց վրա «վաճառվում է» գիրը կա, եւ այդ տների արժեքը տատանվում է 3000 ԱՄՆ դոլարի սահմաններում: Այդ տներից շատերը, որ ոչ քանդվում ու ոչ ավերվում են, մեծ մասամբ անբնակ են՝ «Հայի անիծյալ տուն է» պատճառաբանությամբ: Կարսի հայկական շատ տներ այդ «տարբերակով» պահպանվում են մինչ հիմա: Եզրակացնենք: Կարսում Եղիշե Չարենցի հայրական տան շուրջը բարձրացրած աղմուկը երկու հիմնական նպատակ ունի՝ գտնել գնորդ (պնդում եմ՝ հիմնականում արտերկրի հայ մեծահարուստներից) եւ երկրորդ՝ հերթական շոուն սարքել իբր դրացիների հետ բարեկամություն հաստատելու իրենց պատրաստակամության մասին: Այս առումով ես համոզված եմ, որ բոլորովին էլ պետք չէ այս իրարանցմանը լուրջ վերաբերվել:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ**

# Մարզական

## Հայկ Հակոբյանն ուժեղագույնն է Եվրոպայում

### *Կիպրոսում հայ ծանրորդները 24 մեդալ նվաճեցին*

***Կիպրոսում վերջնագիծը հատեց մինչեւ 20 եւ մինչեւ 23 տարեկանների ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որում հաջող մրցելույթներ ունեցան հայ ծանրորդները: Նրանք ընդհանուր առմամբ նվաճեցին 24 մեդալ (9 ոսկե, 11 արծաթե, 4 բրոնզե) եւ թիմային ընդհանուր հաշվարկով գրավեցին 2-րդ տեղը՝ իրենցից առաջ թողնելով միայն Ռուսաստանի հավաքականին: Վերջինիս առավելությունը մրցակիցների նկատմամբ բացահայտ էր: Ռուս ծանրորդները ընդհանուր առմամբ նվաճեցին 75 մեդալ (34 ոսկե, 18 արծաթե, 23 բրոնզե):***




Մրցումների վերջին օրը կրկին հաջող էր Հայաստանի պատվիրակների համար: 105 կգ-ից ավելի քաշ ունեցող ծանրորդների մրցավեճում վստահ ելույթ ունեցավ Հայկ Հակոբյանը, որը մինչեւ 20 տարեկանների մրցաշարում երկամարտի 390կգ (180+210) արդյունքով հռչակվեց Եվրոպայի չեմպիոն: Նա Արայիկ Միրզոյանից եւ Հռիփսիմե Խուրշուդյանից հետո Կիպրոսում դարձավ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճած 3-րդ ծանրորդը:

105 կգ-ից բարձր քաշ ունեցող ընդամենը 5 ծանրորդներ էին վիճարկում մինչեւ 20 տարեկանների Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Հակոբյանի առավելությունը մրցակիցների նկատմամբ բացահայտ էր: Պոկում վարժությունը նա սկսեց 170 կգ-ից, երբ մրցակիցներն արդեն ավարտել էին ելույթները: 3-րդ մոտեցմամբ Հայկը բարձրացրեց 180 կգ եւ արժանացավ ոսկե մեդալի՝ 14 կգ-ով առաջ անցնելով լիտվացի Վինկաս Սլեւինսկիսից: Հրում վարժությունն էլ հայ ծանրորդը սկսեց այն ժամանակ, երբ մրցակիցներն ավարտել էին ելույթները: Միայն 2-րդ մոտեցմամբ բարձրացնելով 202 կգ-ը, Հայկ Հակոբյանն ապահովեց ընդհանուր հաղթանակը: Իսկ 3-րդ մոտեցմամբ նա գլխավերեւում պահեց 210 կգ-ը եւ 390 կգ-ով դարձավ Եվրոպայի չեմպիոն: 2-րդ տեղը գրաված լեհ ծանրորդ Կրժիշտոֆ Կլիչկին հաղթողին զիջեց 24 կգ-ով: Բրոնզե մրցանակակիր դարձավ լիտվացի Վինկաս Սլեւինսկիսը՝ 357 կգ (166+191):

Մինչեւ 23 տարեկանների մրցաշարում երկամարտի 412 կգ (185+227) արդյունքով չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Եվգենի Պիսարեւը: 407 կգ արդյունքով արծաթե մեդալ նվաճեց չեխ Օրսագ Ժիրին: Նույնպիսի արդյունքով բրոնզե մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Ռուսլան Ալբեգովը:

Իսկ մինչ այդ իրենց հարաբերությունները էին պարզել մինչեւ 105 կգ քաշային ծանրորդները: Արթուր Հակոբյանը մինչեւ 20 տարեկանների մրցաշարում երկամարտի 340 կգ (150+190) արդյունքով 11 մասնակիցների մեջ գրավեց 7-րդ տեղը: Նա յուրաքանչյուր վարժությունում միայն առաջին մոտեցումները հաջող կատարեց: Երկամարտի 375 կգ (165+210) արդյունքով չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Յուրի Տեգկաեւը: 2-րդ տեղը 370 կգ (163+207) արդյունքով զբաղեցրեց ուկրաինացի Ալեքսանդր Տկաչենկոն: Բրոնզե մեդալը նվաճեց լեհ Արկադիուշ Միխալսկին՝ 368 կգ (162+206):

Մինչեւ 23 տարեկանների մրցաշարի հաղթող դարձավ Ռուսաստանը ներկայացնող հայազգի ծանրորդ Դավիթ Բեջանյանը՝ 404 կգ (179+225): Արծաթե մրցանակակիր դարձավ լեհ Կոռնել Ժեկիելը՝ 383 կգ (178+205): Բրոնզե մեդալը բաժին հասավ ռուսաստանցի Գեննադի Մուրատովին՝ 375 կգ (175+200):

Հայ ծանրորդներն առավել հաջող հանդես եկան մինչեւ 23 տարեկանների մրցաշարում՝ նվաճելով 20 մեդալ (6 ոսկե, 10 արծաթե, 4 բրոնզե): Այդ ցուցանիշով մեր հավաքականը կրկին 2-րդն է Ռուսաստանից հետո, որը 42 մեդալ նվաճեց (19+9+14): Իսկ ահա մինչեւ 20 տարեկանների մրցաշարում մեր հավաքականն ընդամենը 4 մեդալ նվաճեց (3 ոսկե, 1 արծաթե) եւ գրավեց 7-րդ տեղը:

Կիպրոսի մրցաշարով հայ ծանրորդներն ավարտեցին ելույթներն ընթացիկ մրցաշրջանում, որը կրկին շատ հաջող էր: Մեր ծանրորդները մեդալների հարուստ ավարով վերադարձան միջազգային ամենաբարձր մակարդակի մրցումներից՝ շարունակելով հայկական ծանրամարտի լավագույն ավանդույթները:

## Հիմնական ուշադրությունը բեւեռվելու է մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը

Ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայի 8-րդ համաժողովում միաձայն կազմակերպության նախագահի պաշտոնում վերընտրվեց Ռուբեն Հայրապետյանը: Նա այդ պաշտոնում առաջադրված միակ թեկնածուն էր:

Համաժողովից հետո կայացած մամուլի ասուլիսում ՀՖՖ նախագահը նշեց, որ առաջիկա 4,5 տարում հիմնական ուշադրությունը բեւեռվելու է մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը, ինչը միջազգային ասպարեզում հաջողությունների հասնելու ամենակարեւոր գործոնն է: Շեշտը դրվելու է մարզերում ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացման վրա: Այդ նպատակով ՀՖՖ-ն Շիրակի մարզում 6 խաղադաշտ է կառուցելու (մեկն արհեստական խոտածածկով), Լոռիում՝ 4 (մեկն՝ արհեստական): ՀՖՖ նախագահն իր շնորհակալությունը հայտնեց «Գանձասարի» հովանավոր Մաքսիմ Հակոբյանին Կապանում ֆուտբոլային ենթակառուցվածքները բարելավելու համար:

Անդրադառնալով ավարտված առաջնությանը, Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ վերջին 3 տարիներին սուր մրցակցություն է ծավալվում չեմպիոնի տիտղոսի համար: Սակայն դեռեւս մեր առաջնության մակարդակն այնպիսին չէ, որ այն ուժեղ համարվի: Խոսելով մրցավարության հետ կապված հիմնախնդիրների մասին, ՀՖՖ նախագահը հայտարարեց, որ մրցավարական բաժնի նախկին պետ Արարատ Ճաղարյանը խստորեն պատժվել է իրեն վարկաբեկելու փորձի համար: Ըստ Ռուբեն Հայրապետյանի, կան երիտասարդ մրցավարներ, որոնց հետ համապատասխան աշխատանք կկատարի մրցավարական բաժնի նոր պետ Կարեն Նալբանդյանը:

Ելնելով ազգային հավաքականի շահերից, որոշվել է 2011-ի բարձրագույն խմբի առաջնությունը սկսել մարտի 1-ին, որպեսզի մեր ֆուտբոլիստները հասցնեն լավ մարզավիճակով ներկայանալ մարտի 26-ին ՌԴ հավաքականի հետ Երեւանում կայանալիք ընտրական մրցախաղին: Ի պատասխան լրագրողներից մեկի այն դիտարկմանը, թե ազգային հավաքականի հաջող մրցելույթները պայմանավորված են ֆուտբոլիստների հանդեպ նախագահի կոշտ մեթոդների կիրառմամբ, Ռուբեն Հայրապետյանը հետեւյալը նշեց. «Ես ֆուտբոլիստներին երեխաներիս պես եմ սիրում, գրկում, շոյում ու նաեւ բարկանում եմ: Մենք հավաքականի համար բոլոր պայմանները ստեղծել ենք ու նաեւ համարձակորեն սերնդափոխություն ենք իրականացրել: Այո, խոստովանում եմ, որ մեկ ֆուտբոլիստի ծեծել եմ: Դա «Բանանցի» ֆուտբոլիստ Էդուարդ Կակոսյանն էր, որը երեխաների ներկայությամբ հայհոյել էր: Նրան ապտակել եմ: Գիտե՞ք ինչն է ցավալին: Մեկ տարի առաջ ֆուտբոլասերները գոռում էին. «Նեմեց, հեռացի», երբ հավաքականը պարտվում էր: Իսկ հիմա, լավ մրցելույթներից հետո չգտնվեց մեկը, որ ասեր. «Կեցցես, Հայրապետյան»: Լավ կլիներ իմ հրաժարականը պահանջեին այն ժամանակ, եթե Հայաստանի ազգային հավաքականը չկարողանա Եվրոպայի առաջնության կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճել»:

ՀՖՖ նախագահը տեղեկացրեց, որ ազգային հավաքականը 2-3 ընկերական մրցախաղ կանցկացնի: Մրցակիցներից 2-ը գրեթե որոշված են: Ինչ վերաբերում է երիտասարդական հավաքականին, ապա գլխավոր մարզիչ Ֆլեմինգ Սերիցլեւի աշխատանքը Ռուբեն Հայրապետյանը բավարար գնահատեց: Իսկ որպես հավաքականների տեխնիկական տնօրեն Սերիցլեւի աշխատանքը գերազանց էր: Ներկայումս երիտասարդական հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնի 2 թեկնածուների հետ բանակցություններ են ընթանում: Ըստ ՀՖՖ նախագահի, նրանցից մեկի հետ ինքն արդեն 4 տարի բանակցում է եւ շատ կցանկանար, որ նա գլխավորեր Հայաստանի երիտասարդական հավաքականը:

**ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ**

## Հայ շախմատիստները գերազանց են խաղում Թուրքիայում

**Շախմատի Հայաստանի պատանեկան հավաքականը գերազանց է հանդես գալիս Թուրքիայի Բուրդուր քաղաքում մեկնարկած մինչեւ 16 տարեկանների համաշխարհային պատանեկան օլիմպիադայում: Շահելով անցկացրած 4 մրցախաղերը, մեր հավաքականը 13,5 միավորով գլխավորում է աղյուսակը: 11,5-ական միավորով 2-3-րդ տեղերում են Հնդկաստանի եւ Թուրքիայի հավաքականները, որոնց հաջորդում են Ուզբեկստանը՝ 11, Ռուսաստանն ու Բելառուսը՝ 10,5-ական միավոր:**

**Հայաստանի հավաքականի կազմում առաջին խաղասեղանի վրա հանդես է գալիս գրոսմայստեր Կարեն Հ. Գրիգորյանը (2368): 2-րդ խաղասեղանի վրա խաղում է ՖԻԴԵ-ի վարպետ Ռոբերտ Աղասարյանը (2313): Թիմի կազմում են նաեւ Հովհաննես Գաբուզյանը (2287), Դավիթ Շահինյանն (2282) ու Տիգրան Ս. Պետրոսյանը (2238): Մեր հավաքականը միջին վարկանիշով (2313) մասնակից 22 թիմերի մեջ 3-րդն է՝ զիջելով միայն Ռուսաստանի (2369) եւ Հնդկաստանի (2363) ընտրանիներին:**

**Մեր շախմատիստները մեկնարկային տուրում 4-0 հաշվով ջախջախեցին Թուրքմենստանի 2-րդ թիմին: Հաղթանակներ տոնեցին Կարեն Գրիգորյանը, Ռոբերտ Աղասարյանը, Դավիթ Շահինյանն ու Տիգրան Պետրոսյանը: 2-րդ տուրում մեր թիմի մրցակիցը մրցաշարի ամենաբարձր վարկանիշ ունեցող Ռուսաստանի հավաքականն էր: Այս անգամ էլ մեր պատանիները վստահ հաղթանակ տոնեցին (3-1): Կարեն Գրիգորյանը հաղթեց Անդրեյ Ստուկոպինին, որի վարկանիշը 90-ով գերազանցում էր հայ շախմատիստի անհատական ցուցանիշը: Հովհաննես Գաբուզյանը պարտության մատնեց Վյաչեսլավ Տիլիչեւին, իսկ Դավիթ Շահինյանն առավելության հասավ Վասիլի Ռոմանովի նկատմամբ: Ռուսներից միակ հաղթանակը տոնեց Ուրի Ելիսեեւը Ռոբերտ Աղասարյանի հետ մրցավեճում:**

**3-րդ տուրում շարունակելով հաղթարշավը, հայ շախմատիստները 4-0 հաշվով ջախջախեցին պորտուգալացիներին: Գրիգորյանը հաղթեց Վիտերբո Ֆեռեյրային, Աղասարյանը պարտության մատնեց Պեդրո Նեւեսին, Գաբուզյանը շահեց մրցավեճը Ֆրանցիսկո Մաթեուսի հետ, իսկ Շահինյանն առավելության հասավ Վլադիմիր Ուլյանովսկու նկատմամբ:**

**Ավելի համառ բնույթ կրեց 4-րդ տուրի Հայաստան-Բելառուս մրցախաղը: Մեր հավաքականը հաղթեց 2,5-1,5 հաշվով: Մեր թիմի հաղթանակն ապահովեցին Կարեն Գրիգորյանն ու Հովհաննես Գաբուզյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Վլադիսլավ Կովալյովին եւ Նաստասիա Զյազուլկինային: Աղասարյանը ոչ-ոքի ավարտեց պարտիան Վիտալի Մերիբանովի հետ, իսկ Պետրոսյանը զիջեց Ստանիսլավ Բիազյուդային:**

## Արթուր Աբրահամը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց

**Արթուր Աբրահամին չհաջողվեց նվաճել երկրորդ միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի թափուր տիտղոսը՝ միավորներով պարտվելով չեմպիոնական գոտու նախկին տեր Կառլ Ֆրոչին (108-120, 108-120, 109-120): Հելսինկիում կայացած մենամարտում Արթուր Աբրահամն անճանաչելի էր: 12 ռաունդների ընթացքում նրան այդպես էլ չհաջողվեց ճնշում գործադրել հակառակորդի վրա, դիպուկ հարվածներով ստիպել Ֆրոչին պաշտպանվել: Վերջինս հատկապես մենամարտի 2-րդ կեսում առավել ակտիվ էր, ինչն էլ ի վերջո որոշեց մրցամարտի ելքը:**



**Եվ այսպես, Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ ռինգում 2-րդ պարտությունը կրեց: Չնայած անհաջողությանը, Արթուրը կշարունակի պայքարը Super Six մրցաշարում: Հաջորդ տարի նա այդ մրցաշարի կիսաեզրափակիչում կմրցի ամերիկացի Անդրե Ուորդի հետ: Պարտությունից պետք է դասեր քաղել եւ նախապատրաստվել առաջիկա մենամարտին: Արթուր Աբրահամը բոլոր հնարավորությունները ունի դառնալու Super Six մրցաշարի հաղթող:**

**Բնականաբար, Կառլ Ֆրոչը գոհ էր իր ելույթից. «Նման տեմպով կարող էի 25 ռաունդ էլ մենամարտել: Ֆիզիկական առումով մենամարտը հեշտ էր ինձ համար: Գլխավորը պետք է լիներ հոգեբանությունն ու կենտրոնացումը: Մենամարտն իրոք դժվարին էր, սակայն ընտրած տակտիկայի շնորհիվ կողքից դիտողի համար հեշտ էր թվում: Պարզապես հիացած եմ, որ կարողացա այսպես վստահ մենամարտել այնպիսի մրցակցի դեմ, ինչպիսին Արթուր Աբրահամն է: Կարող էի փորձել նոկաուտի ենթարկել Արթուրին, սակայն վերջինս կարող էր ինձ դիպուկ հարվածով գետնին տապալել: Այնպես որ ռիսկի դիմելու հարկ չկար: Ամեն անգամ, երբ փորձում էի ճնշել Աբրահամին ու մոտենալ նրան, մարզիչս ինձ հետ էր պահում: Այդպես էլ չզգացի Աբրահամի հարվածների ուժը: Մի քանի անգամ նրա հարվածը դիպավ ինձ, սակայն ոչ մի խնդիր չառաջացավ»:**

## Ռոջեր Ֆեդերերի 5-րդ տիտղոսը

**Շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը դարձավ Լոնդոնում ավարտված թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնության հաղթող՝ եզրափակիչում պարտության մատնելով իսպանացի Ռաֆայել Նադալին (6-3, 3-6, 6-1): Կիսաեզրափակիչում Ֆեդերերը հաղթել էր սերբ Նովակ Ջոկովիչին (6-1, 6-4), իսկ Նադալը պայքարից դուրս էր մղել բրիտանացի Էնդի Մարեյին (7-6, 3-6, 7-6): Ֆեդերերը 5-րդ անգամ դարձավ աշխարհի ոչ պաշտոնական չեմպիոն: Նախկինում նա հաղթող էր ճանաչվել 2003, 2004, 2006 եւ 2007-ին: Լոնդոնում տոնած հաղթանակը Ֆեդերերին 1500 վարկանիշային միավոր պարգեւեց: Չնայած դրան, նա թենիսիստների դասակարգման համաշխարհային ցուցակում 9145 միավորով ընթանում է 2-րդ տեղում: Առաջատարն իսպանացի Ռաֆայել Նադալն է՝ 12450 միավոր:**

# Սաուդաբաեւը հեռախոսազրույց է ունեցել Լավրովի ու Նալբանդյանի հետ

## *ԵԱՀԿ կոնֆլիկտների կանխարգելման կենտրոնի ղեկավարը կոչ է անում «իրատես լինել»*

Ինչպես տեղեկանում ենք Ղազախստանի ԱԳՆ-ի մամուլի ծառայությունից, երեկ տեղի է ունեցել հեռախոսազրույց Ղազախստանի ԱԳ նախարար **Կանատ Սաուդաբաեւի** եւ ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար **Սերգեյ Լավրովի** միջեւ. «Արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները բարձր մակարդակով կայանալիք հանդիպմանը հաջողության հույս են հայտնել: Այդ կապակցությամբ հատուկ նշվել է հանդիպման բոլոր մասնակիցների կառուցողական դիրքորոշման անհրաժեշտությունը՝ գագաթաժողովի քաղաքական փաստաթղթի համաձայնեցման եւ ընդունման ուղղությամբ», նշված է Ղազախստանի ԱԳՆ հայտարարության մեջ: Միեւնույն ժամանակ Աստանայում ԵԱՀԿ գլխավոր քարտուղար **Մարկ Պերեն դը Բրիշամբոն** հայտարարել է, որ ԵԱՀԿ հռչակագրի ամփոփիչ տարբերակի ուղղությամբ «շատ ակտիվ աշխատանք է ընթանում: Ես հուսով եմ, որ Ղազախստանի նախագահությամբ մշակված փաստաթուղթը լավ կընդունվի ԵԱՀԿ գագաթաժողովի մյուս անդամների կողմից», ասել է Բրիշամբոն:

Երեկ Լավրովի հետ ունեցած զրույցից զատ Ղազախստանի արտգործնախարարը հեռախոսազրույց է ունեցել նաեւ Էդվարդ Նալբանդյանի հետ: «Քննարկվել են դեկտեմբերի 1-2-ին Աստանայում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովի նախապատրաստության ընթացքն ու նրա բովանդակությունը: Երկու երկրների ԱԳՆ ղեկավարներն ընդգծել են այդ հանդիպման հաջող եւ արդյունավետ անցկացման կարեւորությունը, կոնկրետ որոշումների ընդունումը, որոնք կորոշակիացնեն ԵԱՀԿ հետագա զարգացման հեռանկարները եւ իրական ներդրում կունենան ԵԱՀԿ տարածքում անվտանգության եւ համագործակցության հասնելու գործում»:

Կոնկրետ ղարաբաղյան մասով հետաքրքական ու միեւնույն ժամանակ սպասելի հայտարարությամբ հանդես է եկել ԵԱՀԿ կոնֆլիկտների կանխարգելման կենտրոնի ղեկավար **Հերբերտ Զալբերը**: Ինչպես փոխանցում է «Նովոստի Կազախստան»-ը, Զալբերը, ընդգծելով, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների մասնակցությունը գագաթաժողովին կարող է հնարավորություն տալ բաց քննարկումների, ասել է. «Բայց ինձ թվում է, պետք է իրատես լինել: Այդ հակամարտությունը բավականին խորն է, այն երկարատեւ պատմություն ունի, հավանաբար իրատեսական չէ ակնկալել խնդրի կարգավորումը այստեղ: Գագաթաժողովում հակամարտության քննարկման արդյունքում հնարավոր են մթնոլորտի բարելավում ու հակամարտության լուծման շրջանակային պայմանների վերաբերյալ առաջընթաց: Վերջիվերջո, հակամարտող կողմերը պետք է իրենք որոշում կայացնեն. ԵԱՀԿ-ն կամ Մինսկի խումբը, այլ երկրների նախագահները կամ արտգործնախարարները կարող են միայն օգնել ու աջակցել բանակցություններին»: Նման դիրքորոշում Զալբերը հայտնել է նաեւ Վրաստանի ու Հարավային Օսիայի հակամարտության վերաբերյալ:

Հ. Ա.

# Հայ-թուրքական հաշտեցում մինչեւ 2015-ը, այլապես անգամ Միացյալ Նահանգները կարող է ճանաչել Ցեղասպանությունը

*1-ին էջից*

«Այս ամենով էլ ստացվում է, որ թեեւ հայ-թուրքական արձանագրություններում նշում չկա ԼՂ խնդրի մասին, դրանք այսպես թե այնպես կապված գործընթացներ են», նշվում է հրապարակման մեջ: Սրա ֆոնին վավերացման գործընթացի չկայացումը, ըստ վերլուծաբանների, ավելի ցայտուն դարձրեց Թուրքիայի ներքին խնդիրները, որտեղ լարվեցին առանց նախապայմանների արձանագրությունների վավերացմանը կողմ արտահայտվող Գյուլի եւ ավելի կոշտ մոտեցում ունեցող Էրդողանի փոխհարաբերությունները:

Ինչ վերաբերում է այս գործընթացում եւս մեկ խաղացողի՝ Ռուսաստանին, ապա այդ առնչությամբ լոնդոնյան վերլուծաբանները գտել են, որ Ռուսաստանը թեեւ սկզբում սատարում էր այդ գործընթացին՝ որպես Վրաստանի մեկուսացման միջոց, վավերացման մոտեցմանը զուգընթաց սկսեց խոչընդոտել այդ ընթացքին՝ «վախենալով ԱՄՆ-ի կամ Թուրքիայի՝ տարածաշրջանում մեծացող ազդեցությունից»:

Հայ-թուրքական հաշտեցման անհաջողությունը, ըստ հետազոտության, հանգեցրել է մի իրավիճակի, երբ Ադրբեջանը, մի կողմից, նեղացած գործընթացում ընդգրկված չլինելու համար, մյուս կողմից՝ իրեն հզոր երեւակայելով՝ կարող է մեծացնել տարածաշրջանային լարվածությունը: Այս համատեքստում որպես ասվածի հիմք են բերվում շփման գծի միջադեպերը, որոնց թիվը զգալի մեծացել է վերջին շրջանում:

«Չնայած միջազգային ջանքերին եւ մտահոգության մեծացմանը, նաեւ բարելավված համագործակցությանը համանախագահող երկրների միջեւ, չնչին առաջընթաց է գրանցվել բանակցություններում, իսկ Բաքուն շարունակում է իր ռազմատենչ հռետորաբանությունը՝ հարցը ռազմական ճանապարհով լուծելու սպառնալիքով», նշում են վերլուծաբանները: Ռուսաստանյան ռազմաբազայի տեղակայման ժամկետի երկարաձգումն էլ այս համատեքստում ներկայացվում է որպես Հայաստանի պատասխան քայլ:

Այս ամենով հանդերձ լոնդոնյան փորձագետները եզրակացրել են, որ մոտակա երկու-երեք տարում հայ-թուրքական գործընթացն ավարտելու հեռանկարները առավել լուսավոր են, քան ավելի կարճաժամկետ հատվածի դեպքում: Այստեղ ընդգծվում է, որ չնայած արձանագրությունները փակուղում են, բայց դրանք խթանել են Թուրքիայում հայերի հետ պատմական հարաբերությունների հանդեպ մեծ հետաքրքրություն՝ թեկուզ Ցեղասպանության առնչությամբ քննարկումների առավել բաց լինելը, քանի տարիներ առաջ:

Եվս մեկ կարեւոր գործոն էլ այն հանգամանքն է, որ նախապես արձանագրություններին դեմ արտահայտվող Ադրբեջանը, հայտնվելով վատ վիճակում, կարող է վերանայել իր դիրքորոշումը: Ըստ վերլուծաբանների, Թուրքիան ճնշում է գործադրում Ադրբեջանի վրա, որպեսզի վերջինս էլ ավելի չսրի ղարաբաղյան հակամարտությունը, ընդ որում, Թուրքիայի, ինչպես եւ մյուս խաղացողների դեպքում ակնհայտ է, որ ազդեցություն է ունեցել վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմը: Այդ պատերազմի հետեւանքները մտահոգում են մեր տարածաշրջանի խաղացողներին, որպեսզի այն չկրկնվի ղարաբաղյան համատեքստում, որն էլ, ի դեպ, կարող է ներքաշել մի շարք երկրների այդ գործողությունների մեջ: Ըստ վերլուծաբանների, հենց սա է փորձել ՌԴ նախագահ Մեդվեդեւը բացատրել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին վերջին մի քանի հանդիպումներում:

Այս ամենի ելքը, ըստ վերլուծաբանների, պարզվում է, Աստանայում ինչ-որ առաջընթացի ակնկալումն է հենց ղարաբաղյան համատեքստում, որն էլ կարող է տեղից շարժել հայ-թուրքական գործընթացը: Բայց ղարաբաղյան առաջընթացը, ըստ լոնդոնյան ինստիտուտի, բավարար չէ հայ-թուրքականը տեղից շարժելու համար, եթե չեն վերացել թուրքական ներքին քաղաքական խոչընդոտները:

Այլ գործոնների ներկայացմանը զուգահեռ՝ վերլուծաբանները փորձում են զգուշացնել հատկապես Թուրքիային, որ եթե մինչեւ 2015-ը՝ Ցեղասպանության 100-ամյակը, տեղից չշարժվի, Թուրքիան կարող է ստորացման եզրին հայտնվել, քանի որ շատ երկրներ, այդ թվում՝ հավանաբար նաեւ Միացյալ Նահանգները, գնում են 20-րդ դարասկզբի իրադարձությունները «Ցեղասպանություն» կոչելու ճանապարհով, հատկապես որ Միացյալ Նահանգներում Ցեղասպանության ճանաչմանը մշտապես դեմ գործած իսրայելամետ լոբբին դիրքորոշման փոփոխության նշաններ է ցույց տալիս:

2015-ը՝ որպես Ցեղասպանության 100-ամյա տարելից, ըստ հրապարակման, կարող է նաեւ հնարավորություն դիտվել Հայաստանի եւ Թուրքիայի համար՝ «վերջնականապես լուծելու իրենց պատմության եւ արտաքին քաղաքականության ամենադժվար հարցերը»:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Պրես Ստենդ» ՍՊԸ-ն (նախկին «Հայմամուլ») աշխատանքի է հրավիրում 25-55 տարեկան բարձրագույն կրթությամբ կանանց՝ կրպակավար աշխատելու համար: Համակարգչային տարրական գիտելիքների առկայությունը ցանկալի է: Կարող են դիմել ինչպես Երեւան քաղաքի, այնպես էլ մարզերի բնակիչները: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 522 199; (010) 522 599 կամ այցելել «Պրես Ստենդ» ՍՊԸ, ք. Երեւան, Արշակունյաց 2, Տիգրան Մեծ տպագրատուն, 5-րդ հարկ, 520 սենյակ:

ԿԱՊ

# Orange-ի ծառայությունները հասանելի են նույնիսկ Հայաստանի սահմանամերձ շրջաններում

## *Մեղրիում բացվեց Orange-ի խանութը, իսկ Մեղրիի մերձակա Լեհվազ գյուղում՝ համակարգչային կենտրոն*

**Orange-ի գերժամանակակից 3G+ ցանցն արդեն հասանելի է Հայաստանի նույնիսկ հեռավոր սահմանամերձ բնակավայրերում: Նոյեմբերի 27-ին Մեղրիում տեղի ունեցավ Orange-ի խանութի պաշտոնական բացման արարողությունը, որին, ի թիվս այլ պաշտոնատար անձանց, ներկա էին Սյունիքի փոխմարզպետ Արա Դոլունցը եւ Մեղրիի քաղաքապետ Սերգեյ Հայրապետյանը: Հաճախորդներին մոտ լինելու՝ ընկերության ցանկության համաձայն, այսուհետեւ այս սահմանամերձ քաղաքի բնակիչներին Orange-ը կընդունի նույն ջերմ ու հարմարավետ մթնոլորտում, ինչպես Երեւանում եւ այլ մեծ ու փոքր քաղաքներում:**

**«Մենք կարճ ժամանակահատվածում կառուցել ենք ընդարձակ ցանց եւ այսօր հպարտությամբ կարող ենք ասել, որ մեր ծառայությունները հասանելի են Հայաստանի բնակչության ավելի քան 93 %-ին, ներառյալ հեռավոր եւ սահմանամերձ բնակավայրերը: Այսօր Մեղրիի բնակիչները նույնպես կարող են օգտվել նորագույն 3G+ տեխնոլոգիաների հնարավորություններից՝ ակնթարթորեն մուտք ունենալ շարժական ինտերնետ, փաստաթղթեր, երաժշտություն եւ ֆիլմեր բեռնել մեծ արագությամբ: Շնորհակալություն եմ հայտնում Մեղրիին ջերմ ընդունելության համար եւ վստահություն հայտնում, որ մեր խանութում նրանք կգտնեն այն ամենը, ինչ փնտրում են հեռահաղորդակցման համար», ասաց Բրունո Դյութուան, որը խանութի պաշտոնական բացման կապակցությամբ ժամանել էր Մեղրի:**



**Մեղրիի այցը շարունակվեց հարեւան Լեհվազ գյուղում, որտեղ Orange-ի եւ «Շեն» բարեգործական կազմակերպության համատեղ ջանքերով հիմնվել է գերարագ ինտերնետով ապահովված նոր համակարգչային սրահ՝ համայնքային զարգացման ուղղված բարեգործական ծրագրի շրջանակներում:**

**Լեհվազ գյուղը, որի 600 բնակիչները մինչ օրս չունեին ինտերնետ հասանելիություն, այսուհետեւ կկարողանան հաղորդակից լինել գերարագ ինտերնետի ընձեռած հնարավորություններին եւ մշտապես կապի մեջ լինել ամբողջ աշխարհի հետ ճիշտ այնպես, ինչպես մայրաքաղաքում: Նորաբաց համակարգչային սրահը համալրված է 7 համակարգչով, տպիչ/սկաներով, Orange-ի Flybox երթուղիչով եւ հարմարավետ կահավորանքով, որը գյուղի բնակիչներին հնարավորություն է տալու ոչ միայն կապի մեջ լինել աշխարհի հետ, այլ նաեւ մասնակցել համակարգչային դասընթացների:**

**«Որպես հեռահաղորդակցության ընկերություն՝ մեր առաջնահերթություններից է ինտերնետը եւ կապի ժամանակակից միջոցները դարձնել հասանելի բոլորին: Այս նպատակով եւ պատասխանատվությամբ է Orange-ը կառուցել ընդարձակ ցանց եւ հատկապես իր ծառայությունները հասանելի դարձրել Հայաստանի բնակչության հեռավոր գյուղական համայնքներում: Համակարգչային սրահները մեր բարեգործական ծրագրերի առանցքում են, քանի որ դրանց միջոցով մենք, համագործակցելով համայնքի հետ, միասնաբար լրացնում ենք հեռահաղորդակցության հնարավորությունները», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:**

**Ինչպես նախորդ նմանօրինակ ծրագրերի դեպքում, այս անգամ նույնպես համակարգչային սրահը կյանքի է կոչվել Orange-ի, «Շեն»-ի եւ գյուղի համայնքի միասնական ջանքերի շնորհիվ, ինչն էլ երաշխավորելու է ծրագրի հարատեւությունն ու երկարատեւ հաջողությունը: Նախագծի համար Orange-ն ընդհանուր առմամբ տրամադրել է 2,714,000 դրամ, 1,300,000 դրամի ներդրում էլ ունեցել են Շենը եւ գյուղի համայնքը:**

**Կորել է**

«ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ ՏՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կլոր կնիքը: Համարել անվավեր:

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակելի տուն, ընդ. մակ.՝ 277.5 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Չարենցի փողոց, տուն 113/7: Մեկն. գինը՝ 117000000 դրամ:

- Բնակելի տուն, ընդ. մակ.՝ 168,8 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Չարենցի փողոց, տուն 113/8: Մեկն. գինը՝ 64000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 30.12.2010թ-ից մինչեւ 01.06.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 29.11.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: